№ 54 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 12 ՄԱՐՏԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 12 ՄԱՐՏԻ № 54

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 9 ՌՈՒԲ.
Մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը—85 կ.։ Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։
1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձինի։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈԹՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր. 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская 23. тел. 7—29.
(ա.օ.) առ. 977 100—95

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւններ։
Սրսկումն «606»-ի և «914»-ի։
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8
Ելիզավետինսկայա փ. № 39. տ. Ջաղէթեանի։
Տէլէֆօն № 9—17.
(չ.ու.կ.) առ. 901. 100—51

ՀԱՅ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Որոշ պրօֆեսիայի, արուեստի, գիտութեան սպասաւորութեան նուիրված անձանց համախմբվելը և համագումար կազմելը, միացեալ ույժերով քննելու համար իրանց պրօֆեսիայի հետ կապված խնդիրները, դասակարգային կամ պրօֆեսիօնալ շահերը, պահանջները, կարիքները—վաղուց մի նուիրագործված սովորութիւն է քաղաքակիրթ երկիրներում։

Որքան էլ տիրում է շատերի մէջ այն կարծիքը, թէ համագումարները գործնական ոչ մի հետևանք չեն արտադրում, բայց, անկասկած, նրանց ունեցած բարոյական օգուտը անվիճելի է։

Պարբերական մամուլի կամ ժուռնալիստների համագումարներ, կոնգրէսներ, ընդհանուր կամ ռայօնական ժողովներ, ժուռնալիստների համագումարներ ըստ ուղղութեան—այն է՝ պահպանողական, ազատամտական-առաջադիմական, սօցիալիստական, ծայրայեղ աջակողմեան կամ ձախակողմեան ուղղութեան—յաճախ են տեղի ունենում Եւրոպայում։ Այդ կոնգրէսներում և ժողովներում արծարծվում, քննվում, մշակվում են ժուռնալիստիկային վերաբերեալ շատ կարևոր խնդիրներ, ինչպէս և հասարակական, քաղաքական, բարոյագիտական, էթիքական նշանակութիւն ունեցող շատ հարցեր, որոնք հրապարակի վրա են դրված և որոնց վերաբերմամբ որոշ ուղղութիւն պէտք է բռնել կամ պէտք է նրանց նոր արծարծել և անց կացնել կեանքի մէջ։

Հայ մամուլը մինչև այսօր չէ ունեցել իր գործիչների համագումար։

Եւ սակայն հայ մամուլի գործիչների կամ ժուռնալիստների համագումարը աւելի քան կարևոր պահանջ է, քանի որ մեր հայկական կեանքի մէջ մամուլը հանդիսանում է ոչ միայն ղեկավար հասարակական կարծիքի, այլ ուղղակի քարոզչի, բարոյագէտի միսսիան ունեցող։

Ի նկատի ունենալով սակայն, որ հայ մամուլի ընդհանուր համագումարը ներկայումս մեծամեծ դժուարութիւններ է ներկայացնում, մենք հնարաւոր ենք համարում այժմ միայն որոշ ուղղութեան և բանակի պատկանող ժուռնալիստների համագումարը և այդ նպատակով որոշել ենք այս տարվայ ընթացքում գումարել «Մշակի» աշխատակիցների և թղթակիցների ժողով, որին կարող են մասնակցել և առհասարակ «Մշակի» ուղղութեան համակիր հայ գրականագէտներ, այն է՝ ազատամտական-առաջադիմական բանակին պատկանող ինտելիգենտ ույժեր։

Սակայն մշակական կամ պրօգրէսիստ ուղղութեան պատկանող ժուռնալիստների և գրականագէտների այդ համագումարի տեղի, ժամանակի և նրա մէջ քննվելի հարցերի մասին մենք կը ցանկանայինք լսել մեր աշխատակիցների, թղթակիցների և համակիրների կարծիքները, որպէսզի ըստ այնմ համապատասխան քայլեր անենք պատշաճաւոր իշխանութիւնից թոյլտւութիւն ստանալու համար։

Մեր կարծիքով՝ համագումարի յարմար տեղը Թիֆլիսն է, իսկ ժամանակը՝ մայիսի վերջերին կամ յունիսի սկիզբներին։

Կը սպասենք կարծիքների։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԽԼՐՏՈՒՄՆԵՐԸ ԻՐԼԱՆԴԻԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 մարտի

ԼՕՆԴՕՆ.—Իրլանդիայի երրորդ հեծելագնդի մօտ 75 օֆիցէրներ հրաժարական տուին գնդի գեներալ Գաուի հետ միասին։ Զինուորական մինիստրութիւնը Իրլանդիայի հրամանատար գեներալ Պեջեթի միջոցով բանակցութիւններ սկսեց օֆիցէրների հետ։ Օֆիցէրներին յայտարարվեց, որ նրանք Ուլստեր ուղարկվում են միայն պետական գոյքը պահպանելու նպատակով և ոստիկանութեանը աջակցութիւն ցոյց տալու՝ կարգը պահպանելու մէջ։ Այն ժամանակ օֆիցէրները համաձայնեցին գնալ Ուլստեր այդ նպատակների համար, վճռականապէս յայտնելով որ չեն մասնակցելու ազգայնականութեան դէմ եղող թշնամական գործողութիւններին։ Երկու հեծելագնդի գեներալը և գնդապետները կանչված են Լօնդօն։ Հեծելազօրքին հիւսիս փոխադրելու կարգադրութիւնը թողնված է։ Հրաժարման դէպքեր են եղել նաև Իրլանդիայի հետիոտն ու թնդանօթաձիգ գնդերում, սակայն նրանք հնազանդվեցին առանց տատանվելու, երբ հրաման տրվեց Ուլստեր գնալու։

Ունիօնիստական լրագիրները համակրելով հրաժարական տուող օֆիցէրների գործելակերպը՝ յայտնում են, որ ունիօնիստները այժմ պէտք է հոգ տանեն այդ օֆիցէրների դրութեան մասին։ Լիբերալ թերթերը օֆիցէրների հրաժարականը վերագրում են քաղաքական ազդեցութիւնների և յայտնում են, որ նրանց շատ խիստ պէտք է վերաբերվել, եթէ ոչ մի զօրքի ձայնը միակ օրէնքը կը դառնայ երկրում։ «Դէյլի-Նիւս» պահանջում է օֆիցէրների հեռացումը, որպէս զինուորական դաւադիրներ պարլամենտի դէմ, և պահանջում է նրանց տեղ օֆիցէրներ նշանակել զինուորներից։

ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍՐԸ ԱՒՍՏՐԻԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 մարտի

ՎԻԵՆՆԱ.—Առաւօտեան ժամանեց Վիլհէլմ կայսրը Ֆրանց Յօզէֆին այցելելու համար։ Կայարանում թագաւորների տեսակցութիւնը շատ սրտագին էր։ Միապետները ամուր կերպով սեղմեցին իրար ձեռքը և երկու անգամ համբուրվեցին, այնուհետև ժողովրդի բուռն կանչերի ուղեկցութեամբ գնացին Շենբրունեան պալատը։ Տեղ հասնելուց յետոյ, Վիլհէլմ կայսրը երկար ժամանակ տեսակցութիւն ունեցաւ Ֆրանց Յօզէֆի հետ։ Ցերեկը Կումբերլենդի հերցոգը այցելեց Վիլհէլմ կայսրին, որից յետոյ Վիլհէլմը ունկնդրութեան ընդունեց Բերխտոլդին։ Հանդիսաւոր նախաճաշից յետոյ, երկու միապետները զրոյց ունեցան հրաւիրված անձերի հետ։ Նախաճաշին ներկայ էին բացի կայսերական տան անդամներից և գերմանական դեսպանատան պաշտօնեաները, նաև Բերխտոլդը, Շտիւրգը և Տիսսան։

ՎԻԵՆՆԱ.—Կումբերլենդի հերցոգը Վիլհէլմ կայսրին այցելելու միջոցին ներկայ էր Ֆրանց-Յօզէֆ կայսրը։ Վիլհէլմի տուած փոխ-այցելութիւնը հերցոգին կրում էր սրտագին բնաւորութիւն։ Վիլհէլմի մեկնելու ժամանակ, նրան կայարան ուղեկցեց Ֆրանց-Յօզէֆը՝ Միապետների հրաժեշտը նոյնպէս սրտագին էր։

ՎԻԵՆՆԱ.—Վիլհէլմ կայսրը մեկնեց դէպի հարաւ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
10 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ հօֆմէյստէր Պլևէի տեղ նշանակված է ներքին գործերի մինիստրի օգնականը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Պարիզից ժամանեց ֆրանսիական դեսպան Պալեօլոգը։

ԲԵՌԼԻՆ.—Ռուսական դեսպան Սվերբէեվի մօտ, մարտի 2-ին, կայացաւ առաջին մեծ բալը։ Դեսպանատան սենեակներում հաւաքվեցին թագաւորի որդիներ՝ պրինցներ էյտել Ֆրիդրիխ և Աւգուստ Վիլհէլմ, դիպլօմատիական մարմինը, ֆօն-Եագօվ, մինիստրներ և բարձր հասարակութեան ներկայացուցիչներ։ Բալին կայսերական պարախումբը մեծ աջողութեամբ կատարեց «Կարնաւալ» պարը։ Բալը անցաւ փայլուն կերպով։

ԿՐԱԿՈՎ.—Մեծ թւով բանւորական խմբեր Գալիցիայից և Լեհաստանից դիմում են դէպի Գերմանիա և Ամերիկա աշխատանք գտնելու։ Միայն՝ մի շաբաթվայ ընթացքում Կրակովի միջով անցան մօտաւորապէս 50,000 հոգի բանւորներ։

ԿԻԵՎ.—Ամբողջ գիշեր հարաւ-արևմտեան կողմում կատաղի փոթորիկ էր։ Գիւղերում շատ տանիքներ քանդվեցին, ծառերը արմատահան եղան։ Շատ տեղերում հեռագրաթելերը վնասվել են։ Դնեպրի վրա վնասվել են մանր նաւերը։ Կառախմբերը և շոգենաւերը տեղ հասան ուշացած։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ.—Հաստատվեց, որ ուրագանի ժամանակ սպանվել են 300 հոգի։

ՍՕՖԻԱ.—Բօլգարական գործակալութիւնը հաղորդում է, որ մարտի 7-ին մակեդօնական փախստականները Պեխչէվի շրջակայքում կամեցան անցնել բօլգարական սահմանը, բայց հանդիպեցին սերբիական սահմանապահ զօրքի հրացանաձգութեան։ Փախստականները պատասխանեցին նրանց։ Վիրաւորված են սերբիական 2 զինուոր։

ԱԹԷՆՔ.—Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, մեծ թւով ալբանացիներ յարձակվել են Սալեսի գիւղի վրա, բայց յետ են մղվել բնակիչների կողմից, որոնք նրանց փախցրել են մինչև Ռադօնեցի։ Ալբանացիները ունեցել են մի քանի սպանվածներ և վիրաւորներ։

ՈՒՐԱԼՍԿ.—Լբիշչենսկի գաւառի Ինդերսկի համայնքի մէջ երևան է հանված ժանտախտ։ Մարտի 1—8-ը հիւանդացել են 12 հոգի, մեռել են 10-ը։

ՊՈՄՊԷՅ.—Բամբակի պահեստում հրդեհ առաջացաւ։ Այրվեց 60,000 հակ բամբակ։ Վնասը հասնում է կէս միլիոնի։

ԲԱԶԵԼ.—Աէրօդրօմի վրա թռչելու միջոցին օդաչու Բօրրեր ընկաւ և մեռաւ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԲԱՒԱՐԱՐ ՊԱՏԱՍԽԱՆ

I

«Սակայն նման փաստերով չեն բաւականանում «Մշակի» դեմօկրատներ՝ B. Intimus ու Սուրխաթեան. նրանք աւելի խոշոր ու աղաղակող փաստերի պահանջ են դնում»։

Այսպէս է փակում «Հորիզոնը» իր պատասխանը (№ 45-ում և 47-ում «Պաշտպանվողի դերից պաշտպանողի դերում» վերնագրով) և մի այդպիսի բնազդական կանխազգացումով կարծես ակամայ դատավճիռը տալիս է իր յօդուածի փաստական մասի վերաբերեալ։

Ոչ միայն մեզ։ Ձեր պատասխանը, կարծում ենք, չէր կարող բաւարարել նաև «Մշակի» և «Հորիզոնի» այն բազմաթիւ ընթերցողներին, որոնք սպասում էին ի պատասխան մեր կտրուկ ու շեշտակի հարցին՝ լսել ձեզնից իսկապէս «խոշոր ու աղաղակող փաստեր»։

Զի որ ձեր իրաւացի նկատողութեամբ «խնդիրը չափազանց լուրջ է և կրթիչ», և եթէ դուք մի կողմից տրամադիր էք «խուսափել կաւի հին ձևերից», միւս կողմից պիտի ցոյց տայիք, որ դուք հեռու էք նաև ձեր նախորդների ոչ գովելի սովորութիւնից՝ կրկնել շարունակ հակառակորդի հասցէին հասարակական ծանր յանցանքներ մատնանշող խօսքեր, որպէս լոկ խօսքեր, այլ գիտէք ու քաջութիւն ունէք աղաղակիչ դօկումենտներով մերկացնել հասարակական անհանդուրժելի ոճրագործին, եթէ կայ այդպիսին այն շարքերում, ուր որոնում էք։

Դա կը լինէր մի կրթական ու առաքինի ծառայութիւն։

Դուք չարեցիք այդ և անուղղակի վկայեցիք, թէ բարոյական նորմաների մասին մեծ ախորժակով խօսողը դժբաղդաբար գիտէ նաև շեղումներ անել բարոյական կոդեքսի էական պատգամներից։

Մենք կանցնենք «Հորիզոնի» առարկութիւնների բոլոր կէտերին մի առ մի։ Յատուկ խնդիրքս է միայն ընթերցողների, մանաւանդ հասարակական և գրական կեանքով ապրող ինտելիգենտների հասցէին՝ ամենայն ուշադրութեամբ հետևել մեր այս բանակռուին, որովհետև հայ գրական բարքերի մի խոշոր ուշագրաւ էջն է շօշափվում ներկայ դէպքում։

Ամենից առաջ մի կարևոր նկատողութիւն։

«Հորիզոնը» ասում է, որ դեմօկրատներս «պաշտպանվողի դերից» անցել ենք ոչ միայն «պաշտպանողի», այլև «յարձակվողի դերին»։

Դա սխալ է հիմնովին։ Յօդուածիս առաջին մասում («Մշակ» № 44) ամենայն բացորոշութեամբ յայտարարել էի, որ «պաշտպանութեան կարիք կողմնակի մարդու միջոցով չունի «Մշակը», որովհետև նա ունի իր տէրն ու տնօրէնը, իր ղեկավարը»։ Միւս կողմից դեմօկրատներս չունենք ուշացած պաշտպանութեան կամ յարձակվելու որևէ պահանջ, երբ տարիներից ի վեր և ամենայն գիտակցութեամբ աշխատակցում էինք «Մշակին»։

Մենք հրապարակ չենք իջել մեղադրեալի, դատախազի կամ դատաւորի—անուանեցէք ինչպէս կուզէք—դերերում՝ «Մշակի» և «Հորիզոնի» միջև, այլ զուտ որպէս կողմնակի քննադատներ։ Եթէ ունենայի իմ սեփական օրգանը, եթէ երբէք գրած չը լինէի «Մշակում», եթէ անգամ անձամբ թշնամացած լինէի «Մշակի» և նրա ղեկավարի դէմ, հաւաստիացնում եմ ձեզ կատարելապէս, որ բառացիօրէն կը կրկնէի ներկայ պօլեմիկայում արտայայտած իմ բոլոր ասածները։ Ճիշդ այնպէս, ինչպէս «Հորիզոնում» երբէք չը գրած և հորիզոնական նախորդ ու յաջորդ սերունդների բարեկամութիւնը երբէք չը վայելած մարքսիստս թոյլ չեմ տայ ինձ ոչ մի դէպքում հէնց այս էջերից ուղղելու նրա հասարակական ֆիզիօնոմիայի հասցէին որևէ աւելորդ էպիտետ, անիմաստ և իրողութեան չը համապատասխանող որևէ որակում։

Ուրեմն պաշտպանվելու, պաշտպանելու կամ յարձակվելու հարց չը կայ ամենևին մէջտեղ, այլ կայ միայն այն, որ «երբ տեսնում ենք հասարակական երևոյթների թիւր ըմբռնումներ, փաստերի գլխիվայր դասաւորութիւն, անկարող ենք լռութեամբ անցնել վրայից հէնց ամենից առաջ իբրև մարքսիստ». այսպէս եմ յայտարարել իմ առաջին յօդուածում։

Այժմ, երկրորդ յօդուածում, համարձակութիւն ունենք ապացուցելու, որ իսպառ ապարդիւն անցան «Հորիզոնի» փորձերը, և նոյն «թիւր ըմբռնումներն ու փաստերի գլխիվայր դասաւորութիւնը» կրկին աղաղակում են հրապարակով։

«Հորիզոնը», ինչպէս քանիցս շեշտում է, մարքսիստների աշխատակցութեան հարցը՝ առհասարակ լիբերալ թերթերում, չի շօշափում, այլ միայն և միմիայն «Մշակում», այնպէս որ հէնց սկզբից մատնում է նա իր աչառու, միակողմանի վերաբերմունքը դէպի մամուլի մի յատուկ օրգանը։ Այն հանգամանքը, որ «Հորիզոնը» ամենամեծ չափով կամ գրեթէ բացառապէս թշնամաբար ընդհարվում է մեր կեանքում «Մշակի» հետ, ուժեղ կասկածի թանձր քող է ձգում նրա մարքսիստներին տուած խորհուրդների «բարի» ու «անկեղծ» մօտիվների վրա, իսկ միւս կողմից մեծ հարցականի առաջ է կանգնեցնում ընթերցողին նրա տուած քարակտերիստիկան՝ «Մշակի» բարոյականի վերաբերմամբ։

«Հորիզոնի» դատողութիւնների ողջ ծանրակէտը կազմում է հարցի բարոյական կողմը։ Բայց հէնց այդ կարևոր կէտի շուրջը առաջացել է մեր յարգելի օպոնենտի քուրայում հասկացողութիւնների մի անցանկալի շփոթ։

Որպէսզի ընդգծած և որոշակի շրջագծած լինէի երկուստեք շահագրգռող թեմայի սահմանները, ես յայտարարել էի, որ «Հորիզոնի» յարուցած (բարոյականի) հարցը չէ վերաբերում անհատի անձնական կամ ընտանեկան, այլ բացառապէս նրա հասարակական բարոյականութեան։

Այս յատուկ ու բացորոշ արտայայտութիւնը թիւր մեկնումների նիւթ է ծառայեցրել «Հորիզոնը» և դրա վրա կառուցել իր առարկութիւնների մեծ մասը։ Տեսէք ինչ է գրում նա.

«Բարոյականութեան խնդիրը է դրվում ոչ թէ մեր ամբողջ հասարակութեան, այլ մի թերթի և նրա ղեկավարների։ Այնպէս որ եթէ մենք խնդիրը լուծել ցանկանանք հասարակական բարոյականութեան շրջանակում և ոչ թէ անհատական, դա նշանակում է զուտ ջուր ծեծել և ոչինչ չանել»։

Ակներև է մեր հակառակորդի թիւր մեկնութիւնը։

Իմ թեզը չէ պարունակում հեռաւոր ակնարկն անգամ հասարակութեան բարոյական մթնոլորտի կամ միջավայրի մասին։ Նա վերաբերում է միմիայն անհատի (կամ մի օրգանի կամ սրա ղեկավարի) հասարակական բարոյականութեան, այսինքն հարցի այն կողմին, որը մեզ երկուստեք զբաղեցնում է։

Իսկ ինչ է նշանակում անհատի հասարակական բարոյականութիւն։

Դա նշանակում է՝ անհատի դէպի հասարակական կօլլեկտիվի շահերն ու կամքը, դէպի հանրական արժէքներն ունեցած յարաբերութիւնների եւ վերաբերումների նորմաներ։

Եթէ մենք բարոյական գաղափարների շէնքը կառուցանենք այսպէս իրական հողի ամրասեպ հիմքերի վրա և այդ պրիզմայով դիտենք ու զննենք մեր բանակռուի նիւթ կազմող րէալ մեծութիւնները, դուք կը տեսնէք, ընթերցող, որ «Հորիզոնի»՝ օդի մէջ կառուցած ապարանքը կը փլվի և անխնայ փշուր-փշուր կը դառնայ։

Յատուկ խնդիրքս է միայն, կրկնում եմ, որ ընթերցողը ամենայն ուշադրութեամբ հետևէ այսքան կրթական նշանակութիւն ունեցող պօլեմիկային։

B. Intimus

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՑԸ

Բարեկենդանի շաբաթը Պետերբուրգում տեղի ունեցաւ Քրէագէտների Միջազգային Միութեան ռուսական խմբակի հերթական համագումարը, որ մի առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում շնորհիւ նրա օրակարգի հարցերից մէկի՝ արհեստական վիժումների պատժի մասին։

Արհեստական վիժումը կամ աբորտը (լայն իմաստով՝ սերմնաոչնչացում) ըստ ռուսական օրէնքների մեծ յանցագործութիւն է, ուստի և այդ բանում մեղադրվողները խիստ պատիժների են ենթարկվում։ Այսպէս, уложеніе о наказаніяхъ իր 1461-դ, 1462-դ և 1453-դ յօդուածներով աբորտի համար յղի կնոջը, նրա գործակցին կամ վիժում առաջ բերող բժշկին, մանկաբարձուհուն և այլն, զրկելով մի քանի առանձին կամ նոյնիսկ բոլոր իրաւունքներից, տալիս է պատիժ՝ սկսած 4 տարվայ բանտարկութիւնից մինչև 10 տարվայ տաժանակիր աշխատանքների՝ նայած «յանցանքի» ձևին ու նրա սուբյէկտին։

Եւ ինչի համար է դա։

Կապիտալիստական հասարակակարգը այնպիսի դրութիւն է ստեղծել, որ հացի խնդիրը, արդի ընտանիքի քայքայումը և մի շարք այլ երկրորդական հանգամանքներ վիժումը առաջնակարգ ու այնքան սովորական երևոյթ են դարձրել։ Դրանով ժամանակակից հասարակութիւնը աւելի բեկբեկվում է, այլասերվում, որի դէմ հէնց այդ այլասերման նպաստողները միջոցներ են հնարում։ Մեր կարգերի ցանցերում խճճված բուրժուական միտքը «յանցանքներ» է յօրինում և նրանց համար պատիժներ ստեղծում։ Եւ նա հանգիստ է։

Դա նման է այն բանին, ինչպէս քայքայման սահմանին հասցրած իր օրգանիզմը «կազդուրելու» համար իմպօտենտը ընդունում է զանազան սպերմիններ, որպէս զի հնարաւորութիւն ունենայ իր մեղսակից մարմինը նորանոր հիւծումների ենթարկելու։

Օրէնքները չեն, որ բուժելու են մարդկութեան վէրքերը. նրանք սպասում են վիրահատի սուր ու համարձակ դանակին։ Ժամանակիս բորոտութիւնը կը վերանայ ապագայ հանրավար կարգերում, երբ այն ստեղծող պատճառները այլեւս չեն լինի։ Սակայն և ներկայումս պէտք է թեթեւացնել բորոտութեան ծանր հետեւանքները, որին անհնար է հասնել օրէնսդրական-պատժական միջոցներով։ Չի կարող գոյութիւն ունենալ պատիժ այնտեղ, որտեղ յանցանք չը կայ, չը կան յանցանքներ այն մարդկանց կողմից, որոնց իշխանութեամբ օժտւած դատական մարմինները յանցաւոր անունն են տալիս, կալանաւորում, «յանցագործներին» նստարանի վրա նստեցնում և պատժում։

Այսօր կայ մի յանցանք—արդի հասարակակարգը։ Այսօր կայ այդ յանցանքի հետեւանք դժոխք-պատիժը, որի ծանրութեան տակ տնքում է տառապեալների հսկայական բանակը, որ իր շարքերում բազում միլիոններ է հաշւում, հառաչող միլիոններ։ Նրանց հառաչանքների միջից լսվում է շարունակ ուժեղացող մի հեծեծանք. դա խեղդւած կնոջ, սաղմնահատի դանակի տակից լսվող լացն է։ Այդ բաւական չէ, մենք այսօր ականատես ենք և արդի դժոխքի հեղինակների ձեռքով օրինագործված «յանցանքի» ու պատժի ճիրաններում դեգերող մօր տաժանելի տառապանքներին։

Նրանց պատասխան տալ աշխատեց ռուսական քրէագէտների համագումարը, որ մեզ զբաղեցնող հարցի շուրջը երկու բանակի էր բաժանվել՝ պատժարարների և հակապատժականների։ Յաղթեց երկրորդ բանակը, և գիտական միտքը Ռուսաստանում անպատիժ յայտարարեց աբորտն ու նրա սուբիեկտներին։

Եւ այդքան միայն։

Մինչդեռ հակապատժականները քրէական իրաւունքի այսպէս կոչւած սօցիօլօգիական դպրոցի կողմնակիցներից են բաղկացած։ Այժմ այդ դպրոցը ցոյց տուեց, որ նա կանգնած չէ իսկական գիտական բարձրութեան վրա. նա արմատականութիւնից այն կողմ չի անցել, ընկերավարական միտքը նրան դեռ չի խմորել. այլապէս նա չէր բաւականանայ սոսկ ձեւական-ժխտողական տեսակէտով, այլ կառաջադրէր իր մաքսիմալ նշանաբանն ու մինիմալ միջոցները։

Աբորտը մի գերազանցապէս հասարակական երեւոյթ է, յատուկ ներկայ կարգերին։ Նրա կատարեալ լուծումը կախված է այն մեծ կռուի ելքից, որ տարվում է աշխատանքի և կապիտալի միջեւ։ Բայց մինչ այդ՝ չէ՞ որ պէտք է թեթեւացնել նրա հասցրած տանջանքները։

Սերմնաոչնչացումն ու նրա հետ կապված երեխայասպանութիւնը—դա մօր անապահով վիճակն է ցոյց տալիս։ Բանւորուհին, մանր արդիւնաբերողի կինը—ահա տարրեր, որոնց անմիջապէս վերաբերում է վիճման հարցը, որոնց խստօրէն խարազանում է տիրապետողների ձեռքի գործիք՝ արդի օրէնսդրութիւնը։

Պէտք է փոխել այդ օրէնսդրութիւնը։ Բայց և կռի՛ւ աշխատաւոր կնոջ մայրական անապահովութեան դէմ։

Իսկ այդ հնարաւոր է՝ աբորտային օրէնսդրութեան հակադրելով հասարակական օրէնսդրութիւն, որ ապահովելու է մայրութիւնը, որով որոշ չափով առնվելու է աբորտի առաջը։

Մայրութեան պետական ապահովագրութիւն

Ահա այս բանը չեն նախատեսել, [illegible] սօցիօլօգիական քրէագէտները։ [illegible] Ահա սա է, որ առաջ է մղում [illegible] ընկերավարական բանակը և նրանով [illegible] ընկերավարական քրէագիտութիւնը։

Ալ. Մարտունի

Մոսկվա

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ԱՍՏՐԱԽԱՆՈ՞ՒՄ ԹԷ ԱՐՄԱՒԻՐՈՒՄ *)

II

Արմաւիրը հիմնվել է 1838 թւին լեռնական չէրքէզախօս հայերի ձեռքով։ Տեղական աւանդութեամբ՝ սրանց պապերը, մեր ազգային պատմական արհաւիրքների երեսից փախստական հայեր, երկու-երեք դար շարունակ ապրել են ցիր ու ցան Կովկասի լեռնաբնակ չէրքէզների մէջ, պարապելով կենդանապահութեամբ և մանրավաճառութեամբ, ժամանակի ընթացքում մոռացել են մայրենի լեզուն, պահելով միայն իրանց հայրենի հաւատը, որով և մինչև այսօր ապրում են իբրև հայ ազգի մի հատուած։ 19-րդ դարի առաջին քառորդին՝ ռուսների և լեռնականների ընդհարման ժամանակ միացել են ռուսական յաղթ բանակին և զինւորական հաւատարիմ ծառայութեամբ, քաջագործութիւններով արժանացել ռուս կառավարութեան շնորհքներին, որ վարձատրել է նրանց մշտական սեփականութիւն տալով մի քանի տասնեակ հազար դեսեատին հող Կուբանի ափին, որից մինչև այժմ օգտվում են նրանց ժառանգները և ապագայում որդոց որդի պիտի օգտվեն։ Արմաւիրը, սկզբնական խեղճ ու կրակ հայկական աւուլը, այդ մի բուռն չէրքէզախօս գործունեայ հայերի ջանքով այժմ մի պատկառելի մեծ գիւղ է, 50—60 հազար բազմացեղ և բազմատարր բնակիչներով և շատ գաւառական քաղաքներից ոչ միայն յետ չի մնում, այլև Հիւսիսային-Կովկասի ամենամեծ վաճառականական կենտրոնն է։ Առևտրական շրջանառութիւնը տարեկան 100—150 միլիօն րուբլու է հասնում. մօտ 10—12 նշանաւոր և փոքր բանկային հաստատութիւններ գործում են այստեղ։ Առևտրի և արդիւնաբերութեան զանազան ճիւղերը զարգանում են հետզհետէ, գլխաւորապէս հացահատիկների առևտուր, ձէթի արտահանութիւն, գործարանային արդիւնաբերութիւն և այլն, որոնք ապագայում աւելի ևս ծաղկելու նշաններ են ցոյց տալիս։ Հողը, գիւղի կառավարութիւնը ամբողջապէս բնիկ, հիմնադիր հայերի ձեռքին է, որոնք ընդհանուր առմամբ շատ բարեկեցիկ վիճակ ունեն, կան նաև խոշոր դրամատէրեր։ Հայ բնակչութիւնը մօտ 20 հազարի է հասնում, բաղկացած չէրքէզախօս բնիկներից և այսպէս կոչւած օտարականներից, որոնք թւով արդէն գերակշռում են բնիկներին և որոնք 25—30 տարուց ի վեր Անդրկովկասի գրեթէ բոլոր հայաբնակ վայրերից, այլ և Թիւրքահայաստանից ու Պարսկահայաստանից գաղթել են այստեղ և օրէցօր բազմանում են։ Հայ գաղթականութեան հոսանքը դէպի Արմաւիր ներկայումս այնքան մեծ և զգալի չափի է հասել, որ բնիկ արմաւիրցիները մի տեսակ խորթութեամբ են նայում նրանց։ Այսպիսով՝ Արմաւիրը կարճ ժամանակում դարձել է Հիւսիսային Կովկասի ամենաբազմամարդ հայաբնակ կենտրօնը, որը իր առևտրական, արդիւնաբերական առաւելութիւնների շնորհիւ ապագայում էլ աւելի կընդարձակվի և մեր բուն հայրենիքից էլ աւելի մեծ գաղթականութեան հոսանք կը գրաւէ, որքան էլ վերջինս մեր բնիկ հայրենիքին և ազգին կորստաբեր լինի։ Այդ հոսանքի առաջը մենք առնել չենք կարող։ Արմաւիրի մերձաւոր և հեռաւոր շրջակայքում, սկսած Սև-ծովի արեւելեան ափերից մինչև Կասպից ծովը—մի տարածութիւն, որ պարփակում է 5 նահանգ—չը կայ մի յետ ընկած գիւղ, ուր գոնէ մի քանի հայ ընտանիք չը գտնվի, իսկ մեծ հայաբնակ կենտրօններն արդէն շատ են։ Արմաւիրը այդ բոլորի հետ կապված է երկաթուղով, Ղզլարն ու Մօզդօկն էլ մօտիկ ապագայում երկաթուղով կը միանան Վլադիկավկազի գծին։

Այսպէս՝ Հիւսիս. Կովկասի հայ գաղթավայրերը կապված են Արմաւիրի հետ նաև առևտրական եռուն յարաբերութեամբ։ Արմաւիրի և Հիւսիսային Կովկասի հայութիւնը պարփակում է ամեն տեսակ դասակարգ՝ և վաճառական, և երկրագործ, և արհեստաւոր, և բանւոր, և դրամատէր, և աղքատ և հարուստ, որոնք Արմաւիրի ապագայ թեմական դպրոցին պատկառելի թւով աշակերտութիւն կարող են տալ։ Միայն Արմաւիրը, ուր ոչ միայն Աստրախանի թեմի բոլոր հայաբնակ կենտրօններից, այլ և Հայաստանի ամեն կողմերից գաղթած հայեր են ապրում, կարող է թեմ. դպրոցը մի քանի հարիւր աշակերտով լցնել։ Մեծ առաւելութիւն է նոյնպէս, որ բնիկ արմաւիրցիները հողատէրեր են, հարուստ և մեծ ձգտում ունեն՝ համայնական ույժերով իրանց անուան վայել մի գործ կատարել ազգային դպրոցական անդաստանում, որը նպաստէր նաև իրանց որդիներին մոռացված ազգային լեզուն սովորելու, որին իւրաքանչիւր արմաւիրցի հայ այնպէս է փափագում, ինչպէս եղջերուն սառնորակ ջրին։ Արմաւիրցին ազգային ամեն պատահ[illegible]ների և տառապանքի մէջ իր լում[illegible]ն է նուիրաբերել, բայց շատ քիչ [illegible] է ստացել ազգից։ Մի պատկառելի հայ գաղութ իր մոռացված լեզուն է որոնում, բայց այդ լեզուն նրան չեն տալիս։ Թեմական դպրոցը Արմաւիրում միայն կարող է ծառայել ինչպէս ընդհանուր թեմի, նոյնպէս և Արմաւիրի կարիքներին, մի կողմից մատչելի դառնալով Հիւսիսային Կովկասի հայ գաղթականներին, միւս կողմից Արմաւիրի պատկառելի հայ գաղութը փրկելով կորստից։

Հայ գաղութների պատմութիւնը ցաւալի իրողութեան էջերով հարուստ է։ Փարթամ բազմամարդ հայ գաղութներ իսպառ անհետացել են ձուլվելով այլացեղ ազգերին, երբ կորցրել են իրանց ազգային ոգին, կրօնը, սովորոյթները և լեզուն։ Նոյն վիճակին է դատապարտված Արմաւիրի հայ գաղութը. ոչ միայն մայրենի լեզուից զրկված չէրքէզախօս հայերն են միանգամայն խզված ազգային կեանքից, այլ և բնիկ հայրենիքից վերջին տասնեակ տարիներում գաղթածները։ Վերջիններս ոչ միայն չեն պատուաստում մայրենի ծառից քաղած կենսունակ ոգին իրանց խորթացած, գոսանալու չափ անզգայացած ոստերին, այլ իրանք ևս վարակված շրջապատող մթնոլորտից՝ հետզհետէ մոռանում են ամեն նուիրական աւանդ՝ լեզու, սովորութիւններ, հայկական յատուկ ոգի, ազգային գիտակցութիւն։ Վշտի և կարեկցութեան զգացմունքով է մարդ համակվում, երբ տեսնում է, որ եկեղեցում անգամ, օտար լեզուն է տիրապետում. ղարաբաղցի այանը, ագուլեցի օղլին, խոյեցի աճին, ախալցխացի ալլան մոմ առնելիս, գանձանակ ձգելիս, հաղորդութեան մերձենալիս օտար լեզուի խորթ հնչիւններով են փսփսում, իսկ փողոցում, տանը, հայ լեզուն ոչ մի տեղ իր գոյութիւնը ոչնչով չէ արտայայտում։ Հայկական ընդհանուր սովորութիւնները, ազգային ամեն ինչ թէ ընտանիքում և թէ դուրս հետզհետէ վտարվում են, տեղի տալով օտարին, անհարազատին։ Նոյնպիսի վիճակ ունեն նաև միւս հայաբնակ կենտրօնները քիչ բացառութեամբ։ Եւ այս հանուր ցաւը կարող է դարմանել միայն ազգային դպրոցը։ Իսկ ազգային դպրոցական գործը Հիւսիսային Կովկասում կը կազմակերպվի միայն այն ժամանակ, երբ թեմական դպրոցը փոխադրվի Արմաւիր, ուր դպրոցը նոյն դերը կը խաղայ, ինչ որ Նոր-Նախիջևանում Բեսսարաբիայի թեմական դպրոցը, որ մեծապէս ազդել և ազդում է նաև շրջակայ գիւղերի հայ ազգայնականութեան վրա ստեղծելով մի տոկուն համայնքը։

Եթէ այսօր արմաւիրցի չէրքէզախօս հայերի մէջ փոքր ի շատէ հայերէն իմացողներ էլ կան, ծերունիներն են, հարազատ զաւակները լեռներին ապաւինած նախկին սերնդի, որ կրակի ու սրի մէջ գոյութեան տագնապալից կռւում չէրքէզների մէջ իբրև սրբազան աւանդ պահել պահպանել է իր ազգային լեզուն ու կրօնը որդոց որդի ու հարկադրել ռուսաց ազատարար դրօշի հովանաւորութեամբ փրկված որդիներին հայերէն սովորել, պանդխտելով մերձակայ հայ գաղութները։ Իսկ այժմեայ երիտասարդ սերունդը վայելելով հանդերձ սխրագործ հայերի զաւակը՝ միանգամայն խորթացել է հայութիւնից, և կը գայ ժամանակ, երբ նախնիների յիշատակն իսպառ կը չքանայ և Արմաւիրի հայութիւնը իբրև երբեմն եղէգն ճակատագրական փոթորիկներից իսպառ կը ջախջախվի, եթէ վաղօրօք իմաստուն կանխատեսութեամբ չը պատսպարվի գալիք կորստեան վտանգից։ Նոյն երեւոյթը կը կրկնվի նաև Հիւսիսային Կովկասի միւս գաղութներում։ Այս կորստաբեր հոսանքին դիմադրող պատնէշը դպրոցն է ընդհանրապէս և մասնաւորապէս թեմական դպրոցը, որոնք և Հիւսիսային Կովկասի հայ համայնքների կրօնական կեանքի ղեկավարը պիտի հանդիսանան։ Ահա այս մտորումներով Արմաւիրի հայ համայնքը լրջօրէն զբաղվում է թեմական դպրոցի խնդրով։ Քաղցր է յուսալ, որ չէրքէզախօս և օտարական հայերը ինչ-ինչ դժուարութիւններից չընկճվելով կը միանան Հիւսիսային Կովկասի հայ համայնքներին և Նորին Վեհափառութեան հաճութիւնը կը ստանան իրանց նախագծած ձեռնարկութիւնը աջողութեամբ պսակվելու։ Միանգամայն հաւատացած ենք, որ գիւղական համայնքը և առանձին անհատներ թեմական դպրոցի ապագայ գոյութիւնը առատաձեռն նուիրատուութեամբ մասամբ ինչ կապահովեն։ Եօթանասուն և հինգ տարվայ գոյութեան ընթացքում Արմաւիրը իր և Հիւսիսային Կովկասի հայութեան դպրոցական և կրօնական-եկեղեցական կարիքների համար ոչ մի աչքի ընկնող և յիշատակութեան արժանի գործ չէ կատարել։ Հասել է ժամանակը, երբ Արմաւիրի հասարակութիւնը կոչվում է մի անջնջելի յիշատակ, մի մեծանուն կոթող թողնելու ազգի և եկեղեցու փառքի համար։ Գիւղի եօթանասունհինգամեայ յօբելեանին թող իրականանայ հասարակութեան այդ սրբազան պարտքը։

Լ. Գ.

Արմաւիր

ՊԷՏՔ Է ՇՏԱՊԵԼ

Նկատելով, որ ամեն մի փոքր ի շատէ քաղաքակրթված մարդու համար հասկանալի է, որ ազգային ինքնուրոյնութեան տեսակէտից չափազանց մեծ նշանակութիւն ունեն անցեալի ուսումնասիրութիւնը, հայրենի հնութիւնների պահպանութիւնը, մենք առանց ձգձգելու հարցը գալիս ենք ասելու, որ հողային խնդիրը ոչ միայն կենդանիներին, այլ և մեռեալներին վերջնական ոչնչացումն է սպառնում. հողի սակաւութեան պատճառով դարաւոր դամբաններն այժմ քանդվում, հերկվում են, հազարաւոր տարիներից մնացած գերեզմանները այժմ հարթվում, ծածկվում են շինութիւններով, և սրանց վրա եղած բազմաթիւ արձանագրութիւնները, պատմական կոթողները կորչում են անհետ. պէտք է շտապել օր առաջ արտագրելու տապանագրերը, օր առաջ պեղելու դամբանները։ Ճարտարապետական տեսակէտից սքանչելիք համարված եկեղեցիները մէկը միւսի ետեւից ընկնում, ոչնչանում են. այսպէս՝ ընկաւ 7-րդ դարի խօսուն վկան՝ Տեկորը, ընկնում է Յովհաննավանքի նման սքանչելիքը, ընկնում է Ամաղուն, Գօշայ վանքը, Թալինը. մի խիստ երկրաշարժ և բոլորը գնացած կը լինեն մեր ձեռքից, անհետ կորած գիտութեան համար։ Պէտք է շտապել, պէտք է լուսանկարել, ուսումնասիրել այդ բոլորը, պէտք է կարկատել, հաւաքել մի տեղ...

Մեռնում են ծերունիները. և ամեն մէկը դրանցից տանում է իր հետ անցեալի ահագին յիշողութիւններ, անցեալի քաղաքակրթութեան ահագին պաշար. նոր սերունդը ուրիշ խնդիրներով է զբաղված, քաղաքակրթութիւնը, գրականութիւնը կեանքի այլ հրապոյրներ են տուել նրան. հետզհետէ վերանում են օրանները, ուր ծերունիները համախմբված պատմում են հայրենի առասպելները, հէքիաթները, իրանց մելիքների քաջագործութիւնները. այժմեան երիտասարդները չեն հետաքրքրվում դրանցով. մի սերունդ ևս, և հայի դարաւոր ստեղծագործութեան ամբողջ պալատը կը կորչի հիմնովին։ Կը գայ ժամանակ, երբ ազգային ինքնաճանաչութեան գաղափարը կը հասունանայ մեր մէջ, կը կամենանք ազգայնացնել մեր գրականութիւնը հիմնելով հայ ժողովրդական բանահիւսութեան վրա. այն ժամանակ կը զգանք թէ ինչ կորուստ ենք ունեցել, նախանձով կը նայենք օտարներին և կանիծենք մեզ, որ Գրիմ-եղբայրներ չենք ունեցել. կը գայ ժամանակ, երբ մեր թէ մասնաւոր և թէ հասարակական շինութիւնները կը կամենանք մեր ազգային ճարտարապետութեամբ շինել, և այն ժամանակ կը զգանք, թէ ինչ մեծ կորուստ ենք ունեցել չուսումնասիրելով մեր ճարտարապետական սքանչելիքները. կը գայ ժամանակ, երբ մեր դպրոցներում այլևս չենք բաւականանայ միայն չոր գիտութիւններ աւանդելով, այլ կը կամենանք ազգային հոգի ներշնչել մեր մատաղ սերնդի մէջ, և կը տեսնենք, որ այդ ոգին էլ հայրենիքի, ժողովրդի, հայրենի յիշատակարանների, ժողովրդական բանահիւսութեան մէջ ամփոփված լինելով՝ նրա հետ միասին անհետացել է. կը գայ ժամանակ, որ մեր լեզուն կը կամենանք ազատել օտարաբանութիւնից, օտար բառերից և հիմնել կենդանի լեզուի, բարբառների վրա, և կը նկատենք, որ շատ բարբառներ շնորհիւ չափազանց մեծ շփման, արդէն խառնվել, կորել, անհետացել են. կը զղջանանք, բայց ուշ կը լինի, կը զոհաբերենք մեծ գումարներ, ոչինչ մնացած չի լինի. շտապենք ուրեմն, քանի դեռ էլի ժամանակ կայ, քանի դեռ հիմնովին չեն կործանվել մեր պարծանքի կոթողները, քանի դեռ չեն մեռել մեր անցեալի յիշատակարան ծերունիները, քանի դեռ չեն յափշտակել, տարել օտարները մեր երկրի հնութիւնները՝ օգնենք և աջակցենք Հայոց Ազգագրական Ընկերութեան, որ նախաձեռնողն է հանդիսացել այս կարեւոր գործին։

Բաղձանք, որ շուտով կանգնի նրա թանգարան-գրադարանի փառաւոր շէնքը ամփոփելու մեր ազգային մտաւոր և հոգեկան կեանքի բիւրեղացած նշխարները։

Զ.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

(Մարտի 10-ի նիստը)

Նիստը բացվում է սահմանված ժամին նախագահութեամբ իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկի։

Իրաւասուների թիւը 60-ից անցնում էր։

Վերնասրահը լի էր երկսեռ հասարակութեամբ։

Հետաքրքրութեան ամենախոշոր առարկան այդ նիստի քարտուղարի ընտրութիւնն էր։

Համարեա անուշադիր և առանց նկատողութեան անցաւ նախորդ նիստի արձանագրութեան մօնոտօն ընթերցումը։

Օրակարգից դուրս հարցապնդումներ եղան իրաւասուներ Կէյլի, Անտօնովի ու Բաչօվի կողմից քաղաքի փողոցների լուսաւորութեան թերութիւնների մասին։

Բաւարարութիւն տալով հարցապնդումներին, նախագահը Դումայի քննութեանն է առաջարկում օրակարգում դրված առաջին հարցը—Սուլաբերիձէի հարցապնդումը գլխաւոր կօնտրօլեօրի վարմունքների առիթով։

Վարչութեան անդամ Մ. Ն. Աթաբէգեանի այդ գործի առիթով տուած բացատրութիւնից պարզվում է, որ եթէ գլխաւոր կօնտրօլեօր Տէր-Դաւթեանի յարուցած դատաստանական գործը «Зак. Рѣчь»-ի խմբագիր Բաղիի դէմ՝ դատարանը թողել է անհետեւանք, արդար ճանաչելով խմբագրին, պատճառը ոչ թէ այն է, որ Տէր-Դաւթեանին ուղղված լրագրական մեղադրանքները արդար են ճանաչվել, այլ որ մեղադրանքի հիմք է ծառայել այն նկատողութիւնը, որ արել է գլխաւոր կօնտրօլեօրին ինքը քաղ. վարչութիւնը առևտրա - ստատիստիկական գործակալ Մարգարովի արած վատնումի առիթով, որին մեղսակից է եղել կօնտրօլի ստորին ծառայողներից մէկը։

Տրված բացատրութիւնները պարունակում էին իրանց մէջ բաւականին ուշագրաւ կէտեր։

Տէր-Դաւթեանը լինելով քաղաքային վարչութեան ծառայող, այն էլ գլխաւոր կօնտրօլեօրի պաշտօնում, ուսուցիչ է նաև 2-րդ առևտրական դպրոցում...

Արդ՝ դատարանին ներկայացված վկայականներից—թէ քաղաքային վարչութեան և թէ դպրոցի վարչութեան կողմից—այն տպաւորութիւնն է ստացվում, որ Տէր-Դաւթեանը ուսումնարան չի յաճախել, պատճառաբանելով որ հիւանդ է, կամ սկարլատինա կայ տանը, մինչդեռ քաղաքային ծառայութեան պաշտօնը վարել է։

Տէր-Դաւթեանը իր ուսուցչական պարտականութիւնները կատարելիս է եղել առ. ժամը 8-ից մինչև 10-ը։

Ուրեմն վարելով ուսուցչական պաշտօնը, ղեկավարելով իր հաշւապահական կուրսերը՝ նա չէր կարող թերանալ գլխաւոր կօնտրօլեօրի պաշտօնում։

Այսպիսով, ինչպէս վարչութեան անդամ Մ. Ն. Աթաբէգեանն էր շեշտում, նրա դէմ եղած յարձակումները հասարակ թիւրիմացութիւնների արդիւնք են։

Հարցը համարվում է սպառված։

Այնուհետև վարչութիւնը զեկուցանում է Վակէում քաղաքային այգի ձգելու համար զատված 5 դեսեատինեաց հողաբաժինը Թիֆլիսի դպրոցների ծնողական կրուժօկին յանձնելու մասին։

Երկար վիճաբանութիւններից յետոյ, որոշվում է հողաբաժինը տալ ծնողական կրուժօկին որոշ պայմաններով։ Պայմանները պէտք է մշակի վարչութիւնը դպրոցական և անտառաբուծական մասնաժողովների հետ միասին։

Ապա նախագահը տեղեկացնում է, որ քաղաքային ծառայողների 5-ամեակների հարցի առիթով դումայի ընդունած որոշումը նահանգապետը չէ հաստատել, պատճառաբանելով որ օրէնքով այդ հարցը պէտք է գաղտնի քուէարկութեան ենթարկվէր։

Նախագահը յոյս է յայտնում, որ դուման գաղտնի քուէարկութեամբ էլ կը շտապի վաւերացնել իր նախորդ որոշումը։

Այնուհետև դուման դիմում է քարտուղարի ընտրութեան հարցին։

Նախագահը կարդաց թեկնածուների անունները՝ Ալէքսանդր Իվ. Ստավրօվսկի, Իւրի Ալէքս. Ստարօսէլսկի, բժ. Լ. Քալանթարեան և վարչութեան նախկին իւրիսկօնսուլտ Քանանօվ։

Վերջինիս թեկնածութիւնը նախագահը իր պատասխանատուութեամբ հանում է ցանկից։

Մնում են երեք թեկնածուներ։ Առաջինը դրանցից ստանում է 25 թերթիկ, երկրորդը 15 և երրորդը 8։

Վերջինս այլևս քուէարկութեան չէ առաջարկվում։

Նախագահը ցոյց տալով Ս. Շահումեանից ստացված հեռագիրը, որով նա խնդրում է իր թեկնածութիւնն էլ նկատի առնել, յայտնում է, որ նա այժմ ներկայ նիստին և ուզում է քուէարկվել։

Իրաւասու Ս. Գալստեան, նոր թեկնածու հանդէս գալու պատճառով, առաջարկում է ընդմիջում անել և մասնաւոր խորհրդակցութիւն կատարել։

Առաջարկը ընդունվում է։

Նիստը վերսկսվելուն պէս դրվում են չորս արկղներ՝ թեկնածուներ Ստավրօվսկի, Ստարօսէլսկի և Շահումեանի համար, իսկ չորրորդը՝ ծառայողների 5-ամեակի հարցի համար։

Գաղտնի քուէարկութիւնը տուեց հետեւեալ արդիւնքը. Ստավրօվսկի ստացաւ 38 սպ. և 28 սև, Ստարօսէլսկի ստ. 24 սպ. և 40 սև, Շահումեան ստ. 28 սպ. և 35 սև։

Ծառայողների 5-ամեակի հարցը անցաւ ճնշող մեծամասնութեամբ 55 ձայնով ընդդէմ 11-ի։

Որոշվում է վերջին հարցի քուէարկութեան արդիւնքի մասին իսկոյն յայտնել նահանգապետին։

Այսպիսով դումայի քարտուղար ընտրվեց Ալէքսանդր Իվանօվիչ Ստավրօվսկի՝ «Тифл. Листокъ» թերթի խմբագրութեան քարտուղարը։

Վերնասրահը իսկոյն սկսում է դատարկվել, իսկ դուման անցնում է օրակարգի միւս հերթական խնդիրներին։

Աշխատակից

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Կիրակի օրը, մարտի 9-ին, Մանթաշեանի առևտրական դպրոցի դահլիճում կայացաւ տեղական վաճառականների ընկ. անդամների տարեկան ընդհանուր ժողովը։

Վաճառականների աւագ Ա. Ն. Միլեան, ժողովը բանալով, առաջարկեց յոտնկայս յարգել ընկ. այս տարում մեռած անդամների յիշատակը։ Յետոյ քննվեցին և հաստատվեցին ընկ. 1913 թ. ելևմտից հաշիւը, I-ին առևտրական և Մանթաշեանի առևտրական դպրոցների 1912—13 թ. թ. տեղեկագրերը։

Այնուհետև տեղի ունեցան պաշտօնատար անձանց ընտրութիւնները։ Վաճառականների աւագ ընտրվեց Ա. Ն. Միլեան (միաձայն), նրան օգնական Ս. Գ. Կաֆեան և Ա. Ա. Ենֆիաճեան։ Առևտրական դպրոցի հոգաբարձութեան անդամ ընտրվեց ինժ. Ի. Մ. Ալիխանեանը։ Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Խ. Տ. Աֆրիկեան, Ս. Գ. Յարութիւնեան և Ա. Ն. Սէյլանեան և սրանց փոխանորդ՝ Ս. Վ. Կվայչաձէ։ Որբերի դատարանի անդամներ ընտրվեցին՝ Ս. Գ. Յարութիւնեան, Ա. Ջ. Արուզով, սրանց փոխանորդներ Մ. Վ. Նասիբեան և Ս. Գ. Սարեան։ Ապա տեղի ունեցաւ արդիւնաբերական տուրքերի վարչութեան անդամների և փոխ-անդամների ընտրութիւն։

ՀԱՒԼԱԲԱՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, մարտի 9-ին, Հաւլաբարի ակումբի դահլիճում տեղի ունեցաւ Հաւլաբարի «Թիֆլիս» սպառողական ընկ. անդամների ընդհ. ժողովը մօտ 50 անդամի մասնակցութեամբ։

Ինչպէս յայտնի է, ընկերութիւնը դեռ անցեալ տարվայ ապրիլից Հաւլաբարում բացել է իր խանութը, կենսական առաջնակարգ մթերքների առևտրով։ Ահա այդ խանութի գործունէութեան անցեալ տարվայ հաշիւն էր ներկայ ժողովի զբաղմունքի գլխաւոր առարկան և ապա վարչութեան անդամների լրացուցիչ ու վերահսկիչ մասնաժողովի նոր անդամների ընտրութիւնը։

Տպագրված հաշւեթերթից և ընկ. վարչութեան նախագահ բժ. Իգիթեանի արած գեկուցումից երևաց, որ վարչութեան գործունէութիւնը, որպէս նոր գործում, թէև անցել է շատ դժուարութիւնների միջով, բայց և այնպէս նա պսակվել է աջողութեամբ և ունեցել որոշ արդիւնք։

---

*) Տես «Մշակ» № 53.

Հաշիւը և նախահաշիւը հաստատելուց յետոյ՝ ժողովը, շնորհակալութիւն յայտնելով վարչութեանը, անցաւ ընտրութիւններին։ Վարչութիւնը բաղկացած է 9 հոգուց, հներից մնում էին բժ. Իգիթեան, Փորաքօվ, Եւլիզարեան, Մուրադեան և Գարդիշեան։ Նորեր ընտրվեցին՝ Մամիկոնեան, Աբաջեան, Օհանբաբօվ և Ստամբոլցեան։

Վերահսկիչ մասնաժողովի անդամներ՝ Դանիէլեան, Մնացականեան, Ղարիբեան, Ջերմիշեվ, Դուրիշեան (վերջին երկուսը փոխ-անդամներ)։ Բ. Մ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դարձեալ Մաշխաանիի դպրոցը

Սղնախ, 1 մարտի

Ղարաբաղի Մաշխաանիի հայոց դպրոցի հարցը մնում է դարձեալ անլուծելի։ Այս մասին թեմ. առաջնորդը պատուիրեց Սղնախի գործակալին՝ աշխատել հիմնել հայոց դպրոց Մաշխաանի գիւղում։ Գործակալը դիմեց Լևոն Մելիք-Նուբարեանին (Բագու)։ Վերջինը պատասխանեց, որ ինքը պատրաստ է տալ խոստացած նպաստը (տարեկան 250 ր.) այն պայմանով, որ մնացած ծախսերը լրացնեն գիւղացիները, ուստի առաջարկեց դիմել Բագուի Հայոց Կուլտ. Միութեան, որին յանձնարարել է հիմնել դպրոց Մաշխաանում։ Գործակալը դիմեց Կուլտ. Միութեան, բայց մինչև օրս պատասխան չը ստացաւ։ Այս գործի համար առաջ Միութիւնը ինքը շատ էր աշխատում, իսկ այժմ չէ էլ պատասխանում։ Ինչու համար Միութիւնը խանգարում է դպրոցի բացումը, քանի որ Մելիք-Նուբարեանը յօժար է։ N. N.

Ընթացիկ կեանքը եւ եղանակները մեզանում

Խանքենդ, 3 մարտի

Եղանակը մինչև երէկ մեզանում կատարեալ գարնանային էր, բայց ահա երկրորդ օրն է, ինչ փոխվել է. երէկվանից անձրև սկսվեց և փոխվեց ձիւնի, որը դեռ այսօր շարունակում է գալ, իսկ միւս կողմից հալվում է։ Այժմեան ձիւնը օգուտ է ցանքսերին, եթէ միայն խիստ ցուրտ և սառնամանիք չը լինի։

Մեր շրջանում ահա մի շաբաթ է, ինչ սկսել են գարնանացանը, բայց ոմանք գիւղացիներից ասում են, որ դեռ շուտ է գարնանացանը սկսելը, որովհետև դեռ կարող է շատ ձիւն գալ, որը կը վնասէ ցանքսերին (գարնանացան)։

Խանքենդի կեանքը էլի առաջվայ տաղտկալի և անմխիթար պատկերն է ներկայացնում. գրաւիչ ոչինչ չը կայ։ Այստեղ որքան էլ աշխոյժ, եռանդ և ընդունակութիւն լինի՝ միանգամայն կոչնչանայ և կանհետանայ։

Իսկ տեղիս հասարակական գործերի մասին լաւ է չը խօսել։

Մի խօսքով՝ սպանիչ մթնոլորտ է։ Եւ եթէ հեռաւոր ընթերցողը ուզենայ գաղափար կազմել Խանքենդի մասին, թող կարդայ պատմական Արշակաւանի պատմութիւնը։ Ա. Ա.

Քաղաքային իրաւասուների ընտրութիւնը

Շամախի, 1 մարտի

Փետր. 18-ին առաջին Պետ. Դումայի պատգամաւոր Ալիևի նախագահութեամբ քաղ. ինքնավարութեան դահլիճում կայացան քաղ. իրաւասուների ընտրութիւնները, որոնք տևեցին մինչև փետր. 23-ը։ Ընտրված են 12 թուրք և 4 հայ, որից մի քանիսը նոր են, իսկ մնացածը վերընտրված։ Քաղաքումս միակ խօսակցութեան նիւթը այդ անաջող ընտրութիւններն են։

Հայ հասարակութեան արժանաւոր թեկնածուները չընտրվեցին, շնորհիւ թուրք կոյր առաջնորդների (թուրքերը մեծամասնութիւն են կազմում)։ Հին իրաւասուները՝ հանդերձ քաղաքագլխով՝ իրանց գործունէութեամբ ցոյց տուին, որ իրանք արժանի չեն այդ կոչման։ Նորերն էլ հներից պակաս չեն։

Մի խումբ շամախեցիներ բողոք են ներկայացրել նահանգապետին այդպիսի ընտրութեան դէմ։ Պ. Ն.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Լուգանսկ, 17 փետրվարի

Ամսիս 12-ին այստեղ, Խարկովի դատ. պալատի քրէական բաժնում, դասակարգային ներկայացուցիչների առաջ դատի էր կոչված Լուգանսկի նախկին ծխատէր Ներսէս ք. Հերթեցեան, մեղադրվելով նախ 1903 թ. 292 ր. Կարմիր Խաչի համար հաւաքած դրամների կորստեան մէջ և ապա թէ 1904 թ. հաւաքած է եղել 400 ր. յօգուտ էջմիածնի վանքի, բայց գործից չէր երևում, որ Հերթեցեան այդ 400 ր. ուղարկել է ըստ պատկանելոյն։

Մեղադրական ակտի ընթերցումից պարզվեց, որ 1902—1904 թ. Ն. ք. Հերթեցեան ուղարկել է 175 ր. Էրզրումի աղէտեալների օգտին երկրաշարժի ժամանակ, իսկ էջմիածնի օգտին ուղարկել է 200 ր. ստանալով սինօդից վկայական, որ իրօք այդ դրամները ստացված են եղել։ Սակայն հ. Հերթեցեանից պահանջվում էր ևս 292 ր. Կարմիր Խաչի դրամը՝ և ապա 400 ր. դարձեալ էջմիածնի օգտին հաւաքած։ Մեղադրական ակտից պարզվում է և այն, որ 292 ր., որ նա հաւաքել է ու յանձնել իր տիրացու Ս. Սարգսեանին, վերջինս կորցրել է դրամը թղթերով, սակայն 5 տարի անցնելուց յետոյ, Սարգսեան՝ քահանայական կոչումն ստանալով՝ մի մեղայական գրով վերադարձնում է 292 ր. հ. Հերթեցեանին, պարզելով գործի էութիւնը Լուգանսկի հայոց աղօթատան հոգաբարձութեան, թէ որովհետև ինքն առաջներում ստանալիս է եղել 15 ր. ռոճիկ և հետևապէս հնար չէ ունեցել ծածկելու կորած դրամի քանակը, այժմ հնար ունենալով և զգալով որ անմեղը պիտի ի զուր տուժէ, Սարգսեան բաց է անում արդարութեան ճանապարհը, ուղարկելով 292 ր.։ Եւ որովհետև հ. Սարգսեանի նամակը լինում է հայերէն, 1912 թ. դատ. պալատի սեսիան վերադարձնում է այն Ալէքսանդրօպոլի դատ. քննիչին՝ ճշդելու խնդիրը։

Քննութեամբ հաստատվում է խնդիրը, և Սարգսեան դարձեալ հաստատում է իր ցուցմունքը. գործը վերադարձվում է պալատ, իսկ վերջինս աչքի առաջ ունենալով Հերթեցեանի անպարտութիւնը 292 ր. վատնելու հարցում՝ գործը շարունակվում է 400 ր. էջմիածնի օգտին հաւաքած դրամի առիթով։

Փետրվարի 12-ին պալատը անցաւ գործին։ Ն. ք. Հերթեցեանին պաշտպանում էր իրաւաբան Անտէյգէր։

Կոչված վկաներն էին Լուգանսկի հոգաբարձական կազմը՝ յանձին Ե. Ա. Քուշնարեանի, Պ. Ց. Աճէմեանի և Ց. Ա. Թովմասեանի։ Վկաներն երդումն ընդունեցին ռուս քահանայից, չը նայած որ լուգանսկեցիք ունեն այժմ ծխատէր յանձին Մկ. քահ. Ղազարեանի։

Վկաները միաբերան յայտնեցին, որ էջմիածնի օգտին առանձնապէս դրամ չէ հաւաքվել. դա որոշ թիւրիմացութիւն է. այլ հ. Հերթեցեան 1904 թ., երբ էջմիածնից վերադարձաւ, խնդրեց հոգաբարձութեան հաւաքել գոնէ 400 ր. և ուղարկել ճեմարանի օգտին, որովհետև ճեմարանի դրութիւնը անմխիթար է եղել տնտեսականապէս։ Էջմիածնի օգտին արդէն 200 ր. ուղարկված է եղել։ Հերթեցեան ք. և Աճեմեան մտնելով Ե. Քուշնարեանի մօտ՝ կազմում են մօտաւոր ցուցակ, թէ ով որքան կարող է տալ։ Նկատելով որ Քուշնարեան տրամադիր չէ դրամ տալու, խնդիրը փակվում է, բայց 400 րուբլու ձայնը իսկոյն հասնում է էջմիածին, և էջմիածինը ճիգ է գործ դնում ստանալ այն, ինչ չէ հաւաքվել։

Ն. ք. Հերթեցեան ճանաչվեց բոլորովին արդար և դատական ծախքերը մնացին պետական գանձարանի վրա։ Պալատում լըսվեց, որ էջմիածնի սինօդը, դեռ չը սպասած դատի հետևանքին, 1912 թ. Ն. քահ. Հերթեցեանին մեղապարտ էր ճանաչել վերոյիշեալ դրամների իւրացման գործում և իր մեղադրական վճռով էլ Հերթեցեանին զրկել քահանայական կոչումից, յարելով որ Հերթեցեանն իշխանութիւն ևս չէ ճանաչում։

Մեղադրեալի պաշտպանը գտաւ, որ սինօդի վարմունքն այդ հարցում ևս սխալ է, քանի որ նա առանց փաստագրերի գործի է անցնում և չը սպասած գործի ելքին՝ պատժում է մեղադրեալին։ Պալատում կարդացվեց էջմիածնի սինօդի պրօկուրորի հեռագիրը յանուն հ. Հերթեցեանի, որ ինքը փետր. 3-ին արդէն թէ Հերթեցեանի բողոքը սինօդի վճռի դէմ—որ սինօդը մերժել էր ուղարկել կառավարիչ սենատին—և թէ իր՝ պրօկուրորի բողոքը ուղարկել է արդարադատութեան մինիստրին՝ բեկանելու սինօդի վճիռը։

Այս դատը արդէն 12 տարի է, որ տևում էր։ Ս. Ս—եան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Թիֆլիսի արհեստաւորաց վարչութիւնը միջնորդութիւն է յարուցել նահանգապետի առաջ, փոխել մի քանի օր առաջ արհեստաւոր ծառայողների նօրմալ հանգստի և ապահովութեան մասին հրատարակված պարտադիր որոշումները, որովհետև այդ որոշումները նրանք գտնում են իրանց համար վնասակար։

◆ Մենք հաղորդեցինք, որ օր. Իգ. Քալանթար հրաւիրվել է ռուսաց դրամատիկական խմբի կողմից մի քանի ներկայացումների մասնակցելու Արտիստական թատրոնում։ Ինչպէս յայտնի է, օր. Քալանթար այս անցեալ սեզոնին գործում էր Խարկովի Սինելնիկովի յայտնի խմբի մէջ. առաջիկայ սեզոնի համար նա արդէն հրաւիրված է Կիևի թատրոնը։ Իսկապէս օր. Իգ. Քալանթար այժմ եկել էր Թիֆլիս Հայոց Դրամատ. Ընկ. հետ կայացած մի համաձայնութեան առիթով, այս Մեծ-Պասի ընթացքում մի քանի հայերէն ներկայացումների մասնակցելու, իբրև գաստրօլեր, սակայն ընկերութիւնը փոխած լինելով իր դիրեկտորութիւնը՝ այլ ևս հայկական ներկայացումներ չեն լինի։ Օգտվելով այդ հանգամանքից և օրիորդի ներկայութիւնից, դերասան Արմէնեանը հրաւիրել է նրան մի ներկայացումն տալու Արքունական թատրոնում, առաջիկայ չորեքշաբթի, մարտի 19-ին, բենեֆիսօրութեամբ իրա՝ Արմէնեանի և մասնակցութեամբ հայ դերասանների։ Դեռ որոշված չէ, թէ ինչ պիէսում հանդէս կը գայ օր. Քալանթար։

◆ Ստացանք «Տարազ» պատկերազարդ հանդէսի փետրվարի համարը, որ սովորականին նման կազմված է շքեղ և խնամքով։ Զետեղված են մի շարք գործիչների պատկերները—Պօղոս Նուպար-փաշայի, Ալէքսանդր Քիշմիշեանի, մալօռուս գրող Շևչենկօյի, Գրիբօեդօվի, Աբիսողոմ Յովհաննիսեանի, նկարիչ Ց. Շամշինեանի, տ. Մաթէոս Խատիսեանի, Ն. Կ. Միխայլօվսկիի, Բախի և բոլոր նրանց, որոնց մասին վերջին ամիսները խօսվեց և գրվեց թէ նրանց գործունէութեան և թէ մահվան տարեդարձների առիթով։ Ինչպէս քանից յայտնել ենք, «Տարազը» ներկայումս մնում է մեր միակ պատկերազարդ ամսաթերթը, և պէտք է զարմանալ, որ նրա հրատարակիչ-խմբագիրը, չը նայելով իր բաժանորդների սակաւութեան, առանց վհատվելու առաջ է տանում իր գեղեցիկ գործը, կրելով նիւթական անագին վնասներ։

◆ Նահանգապետը թոյլատրել է սուրբ Սարգսի ծխ. դպրոցի հոգաբարձութեան, եկող ապրիլի 7-ին, բժ. Կարապետեանի այգում, դպրոցի միջոցները աւելացնելու համար մի զբօսանք կազմել. իսկ 2-րդ կիրակնօրեայ դպրոցի կառավարիչ Մ. Բ. Տէր-Միքայէլեանին՝ ամսիս 22-ին, ժողովարանի դահլիճում, բանւորուհիների ակումբի օգտին, կազմել գրական-երաժշտական մի երեկոյթ։

◆ Այս օրերս ոտքով Թիֆլիս եկաւ ինժեներ Պ. Մ. Պօկրօվսկի, որը իր ճանապարհորդութիւնը կատարում է գրազով, որպիսին նօտարի միջոցով կապել է բարօն ֆօն-Ռօզենկրանցի հետ։ Պօկրօվսկին ոտքով պէտք է ճանապարհորդի 4000 վերստ $3^1/_2$ ամսվայ ընթացքում, յետոյ՝ 4000 վերստ $4^1/_2$ ամսվայ ընթացքում. բոլոր 8000 վերստը պէտք է անցնի առանց կոպէկի, այսինքն ոչ ոքից փող չը պէտք է վերցնի, իր լուսանկարները չը պէտք է ծախի և ճանապարհին չը պէտք է զբաղվի իր գիտեցած գործով, այլ իր գոյութիւնը պէտք է պահպանի ժողովրդի հիւրասիրութեամբ։ Գրազ են եկել 25,000 ր. վրա։ Դուրս գալու տեղից սկսած գտնվելով իր հակառակորդի գործակալների խիստ հսկողութեան տակ, Պօկրօվսկին առաջին անգամ օգտվել է 15 օր ժամանակով. ընդամենը անցել է 6,800 վերստ, 176 օրվայ ընթացքում։ Նա առողջ է, չը նայած այն հանգամանքին, որ ամբողջ ձմեռ ճանապարհին է եղել, որովհետև անցեալ տարվայ սեպտեմբերի 1-ից է դուրս եկել Դվինսկից. միայն իր քաշից պակասել է 1 պ. 5 ֆունտ։ Պ. Մ. Պօկրօվսկին Մինսկի նահանգի բնակիչ է։

◆ «Նոր Ակումբի» անդամների տարեկան ընդհանուր ժողովը, որ կայացաւ ամսիս 8-ին, ակումբի աւագներ ընտրեց՝ բժշ. Ա. Ն. Դիասամիձէին, բժշ. Մ. Ի. Օրբելեանին, Վ. Ս. Մուսխելօվին, Ս. Ի. Պօրաչկօվին, բժշ. Ն. Դ. Էրիստօվին, բժշ. Ե. Ա. Մաչաբելիին և Ա. Զ. Բերեկաշվիլիին։

ԿՈՎԿԱՍ

◆ Լագօդեխից մեզ գրում են. «Ձմեռը մեզանում անցաւ կատարեալ գարնանային եղանակներով. վաղուց է, ինչ թէ նշենին և թէ այլ տեսակի ծառերը բացվել են։ Գիւղացիք արդէն դաշտ են դուրս եկել և սկսել հողագործութիւնն արդէն մի ամիս առաջ»։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Ցայտնի դրամատէր հրէայ Սաիևը ծխական դպրոցների թոշակառու ուսուցիչների համար սանատօրիա շինելու նուիրաբերել է 50,000 ր.։ Ռուսաց սինօդը որոշել է նուիրաբերութիւնը ընդունել և ձեռնարկել սանատօրիայի կառուցման։

◆ Պետերբուրգի համալսարանի ուսանողները պրօֆ. Բօդուէնու-դէ-Կուրտենէին, որը դատապարտված էր բանտարգելութեան իր «Національные и территоріальные признаки въ автономіи» գրքի համար, նրա ազատվելու պատճառով բազմաթիւ ստորագրութիւններով մի ուղերձ ներկայացրին նրան։

◆ Կառավարչական շրջաններում քննվեց Կովկասեան լեռնաշղթայի վրայով երկաթուղու կառուցման հարցը։ Ցանկալի է համարված շուտով սկսել գծի աշխատանքները և կառուցման ծախսը հոգալ գանձարանից։

◆ «Веч. Время»-ի ասելով, ռումինական բարձր հիւրերը Պետերբուրգ կը ժամանեն մարտի 15-ին և Ցարսկօէ-Սէլօում կը մնան 8 օր։

◆ Պետ. Դումայի բիւջէտային յանձնաժողովի անդամներին բաժանվեցին պետական վարկի նախահաշւի վերաբերեալ զեկուցագրեր։ Զեկուցագրի համաձայն ռուս պետութեան պարտքը առ 1-ն յունվ. 1914 թ. պէտք է կազմի 8.809.589,629 ր., 1914 թ. տոկոսները վճարելու համար պահանջվում է 368.794,945 րուբլի։ Իսկ առ 1-ն յունվար 1915 թւի պետութեան պարտքը պակասում է մօտաւորապէս 8.767.296,000 րուբլով։

◆ Նաւթային սովի դէմ կռւելու համար ծրագրվում է 2300 դեսեատին հող վերցնել Բագուի մօտերքի արքունական նաւթաբեր հողերից, որոնք գտնվում են գիւղացիների ձեռքում։

◆ Ֆինանսների մինիստր Բարկի նախագահութեամբ կայացաւ մի խորհրդակցութիւն ծխախոտի պետական մենավաճառութիւն մտցնելու մասին։

◆ Մոսկվայում համառուսական ցուցահանդէս կազմակերպող կօմիտէտը քննեց Պետերբուրգի առաջարկութիւնը՝ ցուցահանդէսը 1916 թւին կազմակերպել, մինչև Գերմանիայի հետ առևտրական նոր պայմանագիր կապելը, և վճռեց իր եզրակացութիւնը ներկայացնել առևտրի և արդիւնաբերութեան մինիստրին։

◆ Պետերբուրգի հասարակական գործիչների ակումբում կարդացվեց նոր կուրսի մասին մի զեկուցում։ Զեկուցման մէջ ընդգծվեց, որ ֆինանսական ոչ մի նոր քաղաքականութիւն անհնար է, մինչև որ չիրագործվի հոկտ. 17-ի մանիֆէստը։

◆ Քաղաքական շրջաններում մինիստրների խորհրդի վճիռը, որով որոշված է Բարձրագոյն իշխանութեան միջոցով Արմաւիր գիւղը քաղաքի վերածել, համարվում է առաջին քայլը Գորեմիկինի կողմից Պետ. Խորհրդի օպպօզիցիայի դէմ կռւելու մէջ։ Ինչպէս յայտնի է, այդ օրինագիծը ընդունվեց Պետ. Դումայի կողմից, բայց մերժվեց Պետ. Խորհրդում։

◆ Թախտաբազարից (Անդրկասպ. երկ.) մեզ գրում են, որ այնտեղ գտնվող կօյրաշուղական խմբի անդամ Գարեգին Ցարմանեանը մարտի 2-ի ցեր. ժ. 1-ին «Ֆրանցիա» հիւրանոցում դաշյնով սպանել է սպասուհի Կսենիա Զէրնէսօվային։ Ոճրագործը ձերբակալվել է, իսկ զոհի թաղումը տեղի է ունեցել մարտի 5-ին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ «Մշակի» անցեալ համարներից մէկում տեղեկութիւն էր տպված այն մասին, թէ վրաց դերասան Դադիանին լրագրութեան միջոցով առաջարկ է արել հրաւիրել վրաց դերասանների համագումար՝ թատրոնական գործի շուրջը խորհրդակցելու։ Այժմ, ինչպէս վրաց լրագրութիւնից տեղեկանում ենք, Վրաց Դրամատ. Ընկ. վարչութիւնը համակրութեամբ ընդունելով այդ առաջարկը՝ իր վրա է վերցրել այդ գործի նախաձեռնութիւնը և արդէն գործի անցել։ Ընտրված է 12 հոգուց բաղկացած մասնաժողով, որ և մշակել ու կազմել է համագումարի օրակարգի հարցերի ցուցակ։ 1) Դրամատիկական գրականութիւն և արուեստ, 2) դրամատիկական ընկերութիւնների գործունէութիւն, 3) բեմական արուեստը և գործիչները, 4) Թատրոնը Վրաստանում, 5) ռէժիսեօրը և այլ հարցեր։ Վրաց թատրոնական գործիչների այս առաջին համագումարը մտադրութիւն կայ հրաւիրել Թիֆլիսում առաջիկայ ապրիլի 20-ից մինչև մայիսի 1-ը։

◆ Քութայիսում նորից սկսել է լոյս տեսնել վրաց «Իմերէթի» ամենօրեայ լրագիրը և «Կօօպերացիա» շաբաթաթերթը։

◆ Վրաց «Սախալխօ Գազեթի» գիւղատնտեսական շաբաթաթերթը, որ հրատարակվում է Քութայիսում, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ գիւղացիութիւնը լուրջ կերպով սկսել է հետաքրքրվել գիւղատնտեսական նորագոյն-կատարելագործված ձևերով, առաջարկում է կազմակերպել գիւղատնտեսական գրքեր հրատարակող խմբագրական մասնաժողով, որը զանազան կողմերում գտնվող գիւղատնտես մասնագէտների աջակցութեամբ հրատարակէր գիւղատնտեսութեան զանազան ճիւղերին վերաբերող մատչելի գրքեր գիւղացիութեան մէջ տարածելու նպատակով։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մարտի 8-ին, Անչիսխատսկայա փող. № 17 տանը, որ պատկանում է Սերգէյ Սեմեօնօվին, անյայտ պատճառներից հրդեհ առաջացաւ։ Վնասը հասնում է 2000 ր.։

◆ Մարտի 9-ին, Ալէքսանդրօպօլի գաւառի բնակիչ Ալէքսէյ Շչերբակօվ յայտնեց ոստիկանութեան, որ նախորդ օրը փողոցում իր գրպանից մի անյայտ անձնաւորութիւն հանեց իր քսակը, անցագրի հետ միասին, և անյայտացաւ։

ՄԱՄՈՒԼ

Թաւրիզի «Միտք» շաբաթաթերթը մարտի 1-ի իր համարում տպած առաջնորդող յօդուածով համեմատութիւն դնելով ինքնապաշտպանութեան բնազդը հայ ազգի և եւրօպական ազգերի մէջ՝ գալիս է շատ տխուր եզրակացութիւնների։

Օրինակ բերելով շուէդական ժողովուրդը, որ ունի $5^1/_2$ միլիօն ազգաբնակութիւն և որն, երկիւղ կրելով Ռուսաստանի կողմից յարձակումների, նորերս իր հայրենիքի պաշտպանութեան գործի համար նուիրեց 25 միլիօն քրօնի մի մեծ գումար, «Միտքը» պախարակում է հայերին, որ ազգային և կուլտուրական նպատակների համար շատ չնչին զոհաբերութիւններ են անում, այնպէս որ ազգային թատրոնը, դպրոցը, մամուլը, ուսուցչութիւնը, ընկերութիւնները ապրում են մուրացկանութեամբ։ Դրա պատճառը, թերթի կարծիքով, այն է, որ մենք հայերս դեռ չենք սովորել ազգովին տալ, ազգային տուրք վճարել, թէկուզ ամեն մինը մի չնչին գումար, և միշտ մեր աչքերը յառում ենք միայն կապիտալիստների կամ հարուստների վրա։

«Մենք անկիրթ ենք, կոպիտ, ժլատ և ստրկահոգի։ Ցոյց տուէք, որ ամենքդ ապրում էք մէկի և մէկը ամենքի համար»։

ԶՈՄԲԱՐՏԻ ԿԱՐԾԻՔԸ ՍՕՑ.-ԴԵՄ. ՄԱՍԻՆ

Գերմանական յայտնի անտեսագէտ Զօմբարտ հիւր է այժմ Պետերբուրգում։ Նրան, ի հարկէ, այցելել են լրագիրների թղթակիցները, և ահա, ի միջի այլոց, Զօմբարտը ինչ է ասել «День» թերթի աշխատակցին։

Շատ հետաքրքրական էր պրօֆ. Զօմբարտի կարծիքը գերմանական սօցիալ-դեմօկրատիայի մասին։ Նա ընդգծում է նրա աշխարհահայեցողութեան թեքումը, նաև գերմանական ինտելիգենցիայի վերաբերմունքը դէպի բանւորական սօցիալական շարժումը։

Ներկայումս Զօմբարտը շատ թերահաւատօրէն է վերաբերվում սօցիալ-դեմօկրատիային։ Նա խոստովանում է, որ բանւորի այն դէմքը, որ ստեղծել են գերմանական սօցիալիստական կազմակերպութիւնները, նրան անհամակրելի է։ Նրա սրտին աւելի մօտ են թւում այն բանւորները, որոնք կաթօլիկական կազմակերպութիւններից են, այն պրօլետարները, որոնք հաւատները չեն կորցրել առ Աստուած։ Նորագոյն կրօնական ուսմունքները գերմանական պրօլետարիատի մէջ, որ երևան եկաւ խմբերով եկեղեցուց հեռանալով, Զօմբարտը դատապարտում և դրա մէջ գտնում է նոյն սօցիալիստական պրօպագանդայի ազդեցութիւնը։ Հեգելեան մօնիզմը, որ խիստ տարածված է ժողովրդական խաւերում, յետ է մղվում իր պրօզայիկ լինելով։

Ռեվիզիօնիզմը չարդարացրեց սօցիալ-դեմօկրատիայի յոյսերը. կուսակցութիւնը կատարելապէս անպատուղ է։

Այն հարցին, թէ չի փոխվի արդեօք դրութիւնը, եթէ սօցիալ-դեմօկրատները մեծամասնութիւն կազմեն րայխստագում, պրօֆ. Զօմբարտը պատասխանեց, որ նախ քան դրա կատարվելը, գերմանական կառավարութիւնը կը փոխի ընդհանուր ընտրողական իրաւունքը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 4 մարտի

«Մշակի» № 44-ի «Ներքին լուրերի» բաժնում գրված էր մի լուր, որ իբր թէ «Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը իր նիստերից մէկում քննութեան առնելով այդ եկեղեցու քահանայ տէր-Յովսէփին քահանայագործութիւնից երկու ամսով զրկելու որոշումը և, գտնելով այդ որոշումը անարդար, վճռեց դիմել կօնսիստօրիային և առաջնորդին ու խնդրել վերաքննել գործը»։

Հոգաբարձութիւնը պատիւ ունի յայտնել, թէ ճիշդ է, որ տէր-Յովսէփ քահանան դիմել էր հոգաբարձութեանս, որ միջնորդի կօնսիստօրիայի առաջ՝ մի առ ժամանակ դադարեցնելու իրան 2 ամսով քահանայագործութիւնից պատիժը և նշանակի վերաքննութիւն։ Սակայն, հոգաբարձութիւնս երբէք չէ զբաղվել ըստ էութեան տէր-Յովսէփ քահանայի այդ խնդրով, քանի որ այդ կարգի հարցերը համարել է զուտ հոգևոր իշխանութեան գործ և հոգաբարձութեան իրաւասութիւնից միանգամայն դուրս։ Ուստի շատ պարզ է և այն, որ հոգաբարձութիւնս չէր կարող, ուրեմն, կօնսիստօրիայի նշանակած պատիժը արդար կամ անարդար ճանաչելու որևէ որոշումն կայացնել։

Հոգաբարձութիւն

Հին-Նախիջևան, 27 փետրվ.

Մենք, ի ներքոյ ստորագրող՝ Հին-Նախիջևանի քաղաքացիներս, անձամբ ճանաչելով ու տարիներ առաջ վայելած լինելով Արսէն էկս-վարդապետ Ղլտճեանի յաջորդութիւնը, սրանով միացնում ենք մեր ձայնը ուրիշ բողոքողների հետ, միանգամայն աններելի համարելով նրան վերստին հոգևոր կոչման հրաւիրելը։

Մինաս Աւագեանց, Խաչատուր Բէգլարեան, Տիգրան Բուդաղեան, Վ. Բունիաթեան, Փ. Տէր-Մկրտչեան, Լ. Մ. Բաբախանեան, Մ. Կիւրեղեան, Արշ. Տէր-Յովհաննեան, Ալէքսանդր Պարզեան, Յովհաննէս Բունիաթեան, Վասիլ Տէր-Մարտիրոսեան, Իսահակ Թադէոսեան, Մինաս Միասեան, Լ. Յովհաննիսեան, Բ. Դունիաեանց

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 11 մարտի

Կովկ. Հայոց Բարեգ. Ընկերութիւնը ստացել է նուէր պ. բժ. Ա. Բուդաղեանից իր հրատարակած գրքերից 160 օրինակ, որի համար խորհուրդս յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։ Խորհուրդ

Բաշ գիւղ (Երևան), 19 փետրվարի

Նոր-Նախիջևանի վաճառականական ակմբանոցի վարչութիւնը իմ գրական 25-ամեայ գործունէութեան յոբելեանի առիթով պ. Ալ. Աբէլեանի միջոցով ուղարկել է 50 ր. նուէր, որի համար բարոյական պարտք եմ համարում յայտնել իմ հրապարակական անկեղծ շնորհակալութիւնը։

Գր. Բալասանեան

Ագինակ գիւղ (Սիբիր), 17 փետր.

Խորին շնորհակալութիւն ենք յայտնում Բագուի մի խումբ նուիրատուներին, որոնք հնարաւորութիւն տուին մեզ, Սիբիրի այս յետ ընկած գիւղում, ստանալ մայրենի լեզուով հայ լրագիր «Մշակը» և կարդալով՝ տեղեկանալ հայ կեանքում կատարված լաւ և վատ դէպքերը։

Անչափ ուրախ ենք։

Մեր խորին յարգանքները և շնորհակալութիւնները Բագուի մի խումբ նուիրատուներին։

Վասիլ Խաչատրեան
Արմենուհի Հովսէփեանց

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

«Կանանց օրը».—Փետրվարի 23-ին բոլոր քաղաքակիրթ երկիրների բանւորականութիւնը (գլխաւորապէս) տօնեց չորրորդ միջազգային «կանանց օրը»։

Այդ տօնակատարութեան նպատակն է՝ արծարծել «կանանց հարցը» ժողովրդական լայն խաւերում և առաջ բերել կանանց շարժում։

Ռուսաց պրօֆէսիօնալ և կօօպերատիվ կազմակերպութիւնները ևս, տեղեկութիւն ստանալով կանանց միջազգային սօցիալիստական բիւրօյի Ռուսաստանի ներկայացուցչուհի Ա. Կօլլօնտայից «կանանց օրը» փետրվարի 23-ին նշանակվելու մասին, որոշեցին այդ օրը մի շարք զեկուցումներ կարդալ կանանց հարցին վերաբերեալ։ Նոյն փետր. 23-ին պատրաստութիւններ տեսնվեցին կանանց հարցին նուիրված յատուկ համարներ լոյս ընծայել՝ բոլոր պրօֆէսիօնալ հրատարակութիւնների կողմից. փետր. 23-ին պէտք է լոյս տեսնէր նաև ընդհանուր, համառուսական «Բանւորուհի» հրատարակութիւնը։ Պէտք է կազմակերպվէին մի շարք ժողովներ, միտինգներ։

Այն մեծ հետաքրքրութիւնն ու կենդանութիւնը, որ առաջ բերեց միջազգային «կանանց օրը» ռուս բանւորների շրջանում, իր վրա դարձրեց ադմինիստրացիայի ուշադրութիւնը։ Մի շարք ձերբակալութիւններ ու խուզարկութիւններ տեղի ունեցան։ Ձերբակալվեցին «Բանւորուհի» ժուրնալի աշխատակիցներից մի քանի հոգի և մի քանի դասախօսներ, որոնք փետր. 23-ին պէտք է խօսէին կանանց հարցի մասին։ Մի շարք քաղաքներում արգելվեցին թէ ժողովներ և թէ դասախօսութիւններ կանանց հարցի մասին։ Բայց և այնպէս, «կանանց օրը» տօնվել է Ռուսաստանի զանազան տեղերում։

Սամարայում «կանանց օրը» տօնվել է ժողովրդական տանը. դասախօսել են կանանց հարցի մասին. Ուսպենսկին կարդացել է «Կին բանւորուհին և նրա նշանակութիւնը կօօպերացիայում» թեմայով։ Երբ ճառախօսները կանանց իրաւունքների մասին խօսելիս անցել են Բրեշկօ-Բրեշկօվսկայային, ոստիկանութեան ներկայացուցիչը փակել է ժողովը։

Ռոստովում առաջին Դումայի նախկին պատգամաւոր քահանայ Աֆանասիեվը գործակատարների ակումբում դասախօսել է «կնոջ մասին». երբ նա յիշատակում է Վօրօնեժի կանանց՝ 2-դ Դումային ուղղած նակազի մասին, ոստիկանութեան ներկայացուցիչը նախազգուշացնում է ճառախօսին. երբ նա անցնում է ռուս կնոջ իրաւունքներից զուրկ դրութեանը, ստանում է երկրորդ նախազգուշացումը, իսկ երբ ճառախօսը սկսեց այն միտքը արծարծել, որ կնոջ փրկութիւնը դեմօկրատիայի հետ միանալու մէջ պէտք է որոնել, ոստիկանութեան ներկայացուցիչը երրորդ նկատողութիւնն անելով ճառախօսին՝ փակում է ժողովը։

Ռոստովում փետր. 23-ը տօնվել է և կանանց ակումբում։ Կարդացվել են հետևեալ զեկուցումները. «կանանց շարժումը Ռուսաստանում և արտասահմանում» և «Կանանց պրօֆեսիօնալ կրթութիւնը որպէս նիւթական ապահովութեան միջոց»։

Եկատերինօդարում կանանց ակումբը տօնել է «կանանց օրը». կարդացվել են դասախօսութիւններ կանանց հարցի մասին։

Փետրվարի 23-ին Խերսօնի Փոխադարձ Վարկի Ընկերութեան ընդհանուր ժողովում վարչութեան անդամ են ընտրվել երեք կանայք։

Պետերբուրգի, Մոսկվայի, Կիևի և մի շարք ուրիշ քաղաքների բանւորական ժողովները և զեկուցումները կանանց հարցի, կանանց շարժումի վերաբերեալ՝ այդ օրը արգելվում են։

Արտասահմանում.— Բեռլինում կիրակի, փետր. 23-ին, տեղի ունեցան կանանց 47 ժողովներ, որտեղ բանաձևեր ընդունվեցին կանանց ընտրողական իրաւունքի պահանջով։

Շվէյցարիայի 30 քաղաքներում փետր. 23-ին բազմամարդ միտինգներ տեղի ունեցան. պահանջվում են կանանց ընտրողական իրաւունքներ։

Բօհեմիայի 40 շրջաններում բանւորուհիների ժողովներ են տեղի ունեցել. բանաձևներում պահանջվում է կանանց իրաւունքների հաւասարութիւն։

Պարիզի «Journal» թերթը, առաջիկայ օրէնսդրական ընտրութիւններին, Ֆրանսիայի բոլոր ընտրողական շրջաններում, կանանց փորձնական ընտրութիւններ է կազմակերպում, որպէսզի պարզվի թէ ընտրողական իրաւունքներով օգտվել ցանկացող կանանց թիւը և թէ՝ ումը կառաջադրեն կանայք, որպէս իրանց թեկնածուներ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

III

Լօս-Անջելօս (Կալիֆ.), 20 փետր. (Ն. տ)

Կովկասում շատերին թերևս յայտնի չէ, որ հայ ժողովրդի ռամիկ խաւերում մուտք են գործել ռուսական մի քանի կրօնական աղանդներ, ինչպէս «հոգեմարտների» (դուխօբօրներ և «մօլօկանների» վարդապետութիւններ, որ բապտիզմը, շտունդիզմը և ուրիշ դաւանանքները ներկայիս ունեն նաև հայ հետևորդներ, թէև շատ սահմանափակ շրջաններում։ Ահա այդ աղանդաւորների մի հատուած—որոնք ժողովրդի մէջ ճանաչված են «մօլօկան» անունով, ոմանց կողմից «պրիգուն» անունով, և որ իրանք իրանց «հոգևորական» են կոչում—ներկայ ռուսահայ գաղթականութեան առաջապահի դեր է կատարած Ամերիկայում։

Անշուշտ մոռացված չէ 1896—1898 թ. թ. Կովկասից, մասնաւորապէս Թիֆլիսի նահանգից ծայր տուող ռուս աղանդաւորների՝ հոգեմարտների գաղթականութիւնը դէպի Կանադա, որ տեղի ունեցաւ չափազանց ողբերգական պայմաններում։ Կանադայի կառավարութեան, ինչպէս նաև բնակչութեան կողմից նրանց ցոյց տրված հովանաւորութիւնն ու բազմակողմանի օժանդակութիւնները միջոցներ տուին այդ գաղթականներին նոր աշխարհի մէջ հաստատվելու բաւականին տանելի պայմաններում, և նրանք հիմնեցին մի քանի գաղութներ ներքին նահանգներում, մասնաւորաբար Վինիբէգ քաղաքի շրջականերում։

Տնտեսապէս բարւոքվելու յարմար միջավայր ունենալով՝ այդ ռուս աղանդաւորները կարճ ժամանակի ընթացքում մի նախանձելի վիճակի տիրացան, ապրելով խաղաղ, ապահով ու գոհունակ մի կեանք։ Սակայն մի քանի տարիներ տեող այդ հանգիստ ապրելակերպը դատապարտված էր մի վատ վախճանի։ 1907—1908 թ. թ. գաղթական ռուսների մէջ ներքին անհամաձայնութիւններ ծնունդ առան։ Մի տեսակ կէս կօմունիստական կենցաղ ունենալով, իրանք անկիրթ, մտաւոր խաւարի գերիներ և զգացմունքներով միայն ղեկավարվելով կենսական բոլոր գործառնութիւնների մէջ՝ նրանք միշտ էլ խաղալիք եղած են իրանց մի քանի կէս-աշխարհական, կէս-հոգևորական պետերի ձեռքում։ Եւ վերջինները ճարպիկ ձեռնածութիւններով միշտ աջողած են օգտվել այդ մութ մտքերից և ամբողջ համայնքներ, հաւաքաբար՝ իրանց շահագործման անսպառ աղբիւր դարձնել։ Տնտեսական կեանքի բոլոր ջիղերը իրանց ազդեցութեան տակն առնելով, համայնքների ամբողջ նիւթական ուժի վրա բացարձակ կօնտրօլ ձեռք բերելով՝ այդ պետերը կատարեալ պատուհաս եղան խեղճ գաղթականների գլխին։ Եւ տարիների մտաւոր կուրութեան մէջ խարխափող գաղթականները երբ վերջապէս իրանց աչքերը բացին և տեսան մերկ իրականութիւնը, աներևակայելի լքում և յուսահատութիւն տիրեց նրանց։ Նրանք համոզվեցին, որ տարիներով կեղեքված են եղել և հսկայ հարստութիւններ զանազան մութ անկիւնների մէջ են հալված։ Տեղեկացան, որ իրանց հոգևոր պետերը համայնքներից դուրս, ապահով վայրերում իշխանական դղեակներ կառուցած են իրանց համար և փառաւոր հարեմներ ստեղծած՝ իրանց՝ աղանդաւորների ամենագեղեցիկ աղջիկներից։ Եւ գաղութների քայքայումը սկսվեց։ Տասնեակներով մարդկանց, կանանց ու մանուկների խմբեր սկսեցին թողնել իրանց խրճիթները և թափառականի գաւազանը առնելով՝ տոպրակների մէջ հաց և սպիտակեղէն՝ սկսեցին չափչփել Կանադայի նահանգները։ Անտուն, անտեղ, առանց դրամի, առանց գործի, մի օտար աշխարհում, այդ թափառական խմբերի վիճակը Կանադայի մէջ արտասովոր յուզում առաջ բերեց։ Կառավարութիւնը, թերթերը և բնակչութիւնը անմիջապէս գործի ձեռնարկեցին, սկսեցին համոզել նրանց թողնել այդ թափառական կեանքը, նոր հողեր, նոր տնտեսութիւն և ամեն օժանդակութիւն էր առաջարկվում իրանց, սակայն անօգուտ։ Բարեգործական ամերիկեան ընկերութիւնների և մասնաւոր անձերի կողմից առաջարկված ամեն դիւրութիւններին ռուս աղանդաւորները մերժումով էին պատասխանում, և երբ իրանց հարցվում էր, թէ ինչու են այդպէս աննպատակ թափառում, «ճշմարտութիւնը փնտռելու համար» լինում էր պատասխանը։ Արդէն կանադացիները շատ տարօրինակութիւններ տեսած էին նրանց մէջ. յաճախ պատահած էր, որ նրանք անասունները արձակէին գութաններից և կառքերից, յայտարարելով որ սուրբ հոգին արգելեց տանջել խեղճ կենդանիներին։ Լալով, համբուրելով ներողութիւն էին խնդրում եզներից և ձիերից, նրանց պատճառած նեղութիւնների համար, և իրանք լծվում նրանց տեղ։ Այդ օտարոտիութիւնների մասին չափազանց շատ գրվեցին Կանադայի ֆրանսիական և անգլիական թերթերում 1907—1908 թ. թ., և վերջը նրանք իրանց կամքին թողնվեցին։ Նախկին գաղութների մնացորդները թէև մնում են իրանց հին տեղերում *), բայց արդէն թափառականների խմբեր հետզհետէ սկսեցին անցնել սահմանը և Կալիֆօրնիա մտնելով՝ բրիտանական Կօլումբիայի միջով՝ հաստատվեցին Լօս-Անջելօսի մէջ։

Թիֆլիսի նահանգի ռուս աղանդաւորներին հետևեցին նաև Կարսի շրջանի ռուս աղանդաւորները, որոնք ընտանիքներով, երբեմն 20—30 տուն՝ սկսեցին թափառել Լօս-Անջելօս, գրաւվելով մասնաւորաբար այդ քաղաքի մեղմ, հաճելի կլիմայից։ Եւ ահա այդ ռուս ընտանիքների օրինակը վարակեց նաև Կարսի հայ գիւղացիներին։ Վինիբէգի մէջ արդէն 1898 թւին երկու կարսեցիներ կային, 1899 թ. 5 անձ և մէկ ընտանիք, որոնք գաղթեցին Լօս-Անջելօս 1903—1905 թ. թ.։ 1905 թւին Ղարաղալա գիւղից երեք հայ ընտանիք են հասնում Լօս-Անջելօս, իսկ այդ թւականից յետոյ յաջորդաբար ամեն տարի 3, 4, 6, 10 ընտանիք։

Ղարաղալայի «հոգևորական» համայնքի՝ մօտ 18—20 ընտանիքների Կալիֆօրնիա գաղթելը պատճառ եղաւ այն համատարած արտագաղթի շարժման, որ ներկայիս ծաւալվել է Կարսի և Շիրակի գրեթէ բոլոր գիւղերում, մի վտանգաւոր երևոյթ առնելով։ Վերջին 5—6 տարիների ընթացքում Կարսի շրջանի մօտ 40 գիւղերի և Ալեքսանդրօպօլի մօտ 70 գիւղերի մէջ մի վարակիչ ախտի նման մուտք է գործել այդ շարժումը, և եթէ արտակարգ պայմաններ արգելք չը լինեն նրան մէկ-երկու տարուց յետոյ Գանձակի, Շուշու և Թիֆլիսի հայ գիւղերի մէջ ևս պիտի տարածվի այդ գաղթային շարժումը։

Remmius

---

*) Ռուս աղանդաւորների կանադական գաղութների, ինչպէս նաև Կալիֆօրնիայում ապրող ռուսների մասին կը գրեմ յատուկ մի յօդուած։ R—s.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Հրագիրների ասելով, եկող մայիսին Պարիզում կայանալու է քաղաքային ինքնավարութիւնների ներկայացուցիչների համագումար։ Համագումարին մասնակցելու են՝ Ռուսաստանը (Պետերբուրգ և Մոսկվա), Սպանիան (Մադրիդ, Բարցելօնա, Սեվիլիա և այլն), Անգլիան (Լօնդօն, Գլազգօ), Բելգիան (Բրիւսսել, Անտվերպէն)։ Համագումարում քաղաքները ունենալու են որպէս ներկայացուցիչ քաղաքագլուխներին. միայն Պետերբուրգ, Լօնդօն և Մադրիդ քաղաքները համագումար են ուղարկելու բացի քաղաքագլուխներից և մի քանի իրաւասուներ։

◆ «Vorwärts» ուրախութեամբ յայտնում է, որ սկանդալից միայն սօցիալիստները մաքուր դուրս եկան։ Ժօրէսը՝ գերագոյն գաւառն է հասարակապետութեան։ Իսկական դեմօկրատիայի սկզբունքը տիրապետող է հանդիսանում երկրի դժուարին հարցերում։

◆ Վիէննայի «Milit. Rundschau» թերթում տպված է մի նոր յարձակողական յօդուած Ռուսաստանի դէմ։ Յօդուածում ասված է, որ Ռուսաստանի ռազմագիտական դրութիւնը վատանում է։ Ազգութիւնների շարժումը ուժեղանում է։ Առանձնապէս աճում է Ուկրայնեան շարժումը. Ռուսաստանին ընդհարում է սպասում Հեռաւոր Արևելքում։ Այդ բանը Ռուսաստանը գիտակցելով առաջ կամենում է արևմուտքում գործել։ Ֆրանսիան Ռուսաստանին դրդում է դէպի այդ ընդհարումը հէնց հիմա, եթէ ոչ նա կանցնի, երբ Ռուսաստանը պատերազմի բռնվի Հեռաւոր-Արևելքում։

◆ Կ. Պօլսի «Ազատամարտ» թերթը Թիւրքաց կառավարութեան կարգադրութեամբ խափանված լինելով, նրա տեղ փետրվարի 2-ից սկսել է հրատարակվել «Շանթ» օրաթերթը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պօստաւոր գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Պօստաւոր գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստաւոր գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագօններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12 ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստաւոր գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստաւոր գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստաւոր գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագօններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱԼԵԱՆ—1—2 ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վերաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ՆԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—29

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բեբուտովսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեկտրօտերապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տէլէֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—24

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Գուտտենբերգ" գրավաճառ. վաճառվում են

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ, 4 հատոր, պատկերազարդ, ամենալաւ նուէր	8 ր. 50 կ.
ՀԱՅ ՄԵԾԱՏՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, (1400—1900)	1 ր.
ԱՇՈՏ ԵՐԿԱԹ, ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ, նոր տպ.	1 ր.
ԿԵԱՆՔԸ ԾՈՎԵՐԻ ԽՈՐՔՈՒՄ, 50 պատկերով	30 կ.
ՕՐԱՑՈՅՑ ՀԱՅ ԿԱԹՕԼԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ, 1914 թ.	1 ր.
ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ ՄԻԿՐՈԲՆԵՐ, բժ. Սարգսեանի	15 կ.
ՔԻՒՐԴ ՕՂԼՈՒ ՀԷՔԻԱԹԸ, երգերով աշըղ Ջամալի	25 կ.
ՄԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԲՆԱՊԱՇՏԻ ԴԱՒԱՆԱՆՔԸ	35 կ.
ԱՄԵՆՔԻՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ, սեղանի օրացոյց, բազմաթիւ պատկերներով, ընտիր տպագր. Թէոդիկի	1 ր. 50 կ.
ԴՕՔՏՕՐ ՄՈՌԱՑԻ ԿՂԶԻՆ, հետաքրքրական վէպ	50 կ.
ՄՏԵՐԻՄ ԶՐՈՅՑՆԵՐ, սեռական կեանքի մասին	45 կ.
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԵՂՔԵՐ, պրոֆ. Հօմօնդի	1 ր.
ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱ, Շիրվանզադէի	50 կ.
ԹՈՅԼԱՏՐՎԱԾ ՊԻԷՍԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ, հայ բեմի վրա	50 կ.
ՃԱՇՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂ.	3 ր.
ԴԱՆԻԷԼԻ ԹԵՐԹԵՐ ընտիր տպագ.	20 կ.
ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ, ոսկէ տառերով	5 կ.

Դիմել՝ Тифлисъ, книж. маг. «Гуттенбергъ»
Г. И. Галустьяну.

◆ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ◆
ՏՆԵՐ
Նիկօլայեվսկայա, Չէրքէզօվսկայա և Պեսկօվսկայա փողոցների վրա, Դիդուբէում, Մետեխի զառիվայրի վրա մի խանութ, և մի ամարանոց Կօջօրում։ Տեղեկանալ Գօլովին. պր. «Օրիանտ» հիւրանոցում, № 18, առ. ժամը 10—2-ը և երեկ. ժամը 4—6-ը
222. 5—1

Լոյս տեսաւ
ԳՐԻԳՈՐ քահ. ԳՈՐԳԵԱՆՑԻ
ՑՈՂԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ
ա) «Կարկուտ» . . . . . գ. 5 կ.
բ) «Զատիկը բերաւ» . . . գ. 5 կ.
Դիմել Գանձակ, Գրիգոր ք. Գորգեանցին։
(օ. մ.) 221. 5—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

սրանով յայտարարում է, որ առաջիկայ ապրիլ ամսի 9-ին ինքն նշանակած ունի նուազուրդ՝ Աւճալայի ջրհան կայարանի համար 2 հատ ջերմային (тепловые) շարժիչ (Դիզելի տիպի) պատրաստելու և կառուցելու գործը յանձնարարելու համար։ Շարժիչներին կից պահանջվում են և հետևեալները. կենտրոնախոյս երկու նասօս, շարժիչներին վերաբերեալ բոլոր անհրաժեշտ խողովակներ, փականներ, լծակներ, տախտակներ, շարժիչ փոկեր (կենտրոնախոյս ջրհանները շարժելու համար), նոյնպէս և ջրի աւազանի համար ծծիչ-խողովակներ։

Մատնանշած գործը պիտի մատակարարէ 35,000—40,000 դոյլ ջուր Աւճալայից, սեղմիչ մագիստրալով, 16 դիւմէտրի և մինչև 4500 սաժ. երկար., մանօմէտրիկ. բարձրութեամբ 115 մէտր։

Ծծելու խորութիւնը մինչ 5 մէտր։

Որպէս վարիանտ՝ ի տեղի կենտրոնախոյս նասօսների—արագաշարժ գլանաձև նասօսներ, որոնք անմիջական կերպով միացված պէտք է լինեն մօտօրների հետ։

Իւրաքանչիւր շարժիչի ույժը պէտք է լինի 150 ձիու ույժից ոչ պակաս։ Անհրաժեշտ է վառելիքի, օծելու իւղի և ջրի ծախքն ստանալու գարանտիան։

Յայտարարութիւնների մէջ պէտք է մատնանշված լինի գործը ստանձնելու, աւարտելու և յանձնելու ժամանակամիջոցը։

Դրամական վճարումները կը կատարվեն ամսէ-ամիս, երեք տարվայ ընթացքում։ Առաջին վճարը մի ամսից յետոյ, երբ կը ձեռնարկվի շարժիչների կառուցման։

Նուազուրդին մասնակցել ցանկացողները հրաւիրվում են ներկայացնել իրանց յայտարարութիւնները՝ փակ ծրարներով, որոնց վրա պէտք է գրված լինեն՝ «Въ конкуренціи 9 апрѣля на поставку двигателей и насосовъ для водоподъемной станціи въ Авчалахъ». Ծրարները, թէ պօստով ուղարկվելիք և թէ անձամբ ներկայացվելիք, պէտք է հասցէագրված լինեն այսպէս. «г. Члену Управы, завѣдывающаго Строительнымъ отдѣленіемъ Тифлисской Городской Управы». Ծրարները պէտք է ստացված լինեն ապրիլի 9- ցերեկվայ ժամը 12-ից ոչ ուշ, երբ և տեղի կունենայ նուազուրդը։

Նուազուրդի հետևանքները քննութեան կառնվեն Թիֆլիսի քաղաքային Ուպրավայի կողմից, որը և կորոշէ գործը յանձնել այն մարդուն, որի առաջարկները ձեռնտու կը նկատվեն քաղաքի համար։

Պայմանագրի նախագիծը և մեքենային շինութեան մակարդակը կարելի է տեսնել բոլոր լի օրերը՝ սկսած առաւօտեան ժամը 9½-ից մինչև ցեր. ժամը 3-ը՝ Ուպրավայի Ջրմուղային մասի գլխաւոր գործավարի մօտ։

Յայտարարութեան պէտք է կցված լինի 3000 ռուբլի գրաւականի անդորրագիրը՝ ստացված Ուպրավայի կասսայից։ Առանց յիշեալ գրաւականի ներկայացված յայտարարութիւնները կը մնան անհետևանք։

Այն անձնաւորութիւնը, կամ լիազօրը, որի համար որոշում եղած կը լինի նրան յանձնել գործը, և որ աշխատանքները իրան յանձնելու յայտարարութեան օրից սկսած մինչև 10 օրը չի ներկայանայ պայմանագիր կապելու համար, կը զրկվի իր ներկայացրած գրաւականից, որը կը հաշվի յօգուտ քաղաքի, իսկ աշխատանքները կը տրվեն՝ Թիֆլիսի Քաղաքային Ուպրավայի հայեցողութեամբ՝ մի այլ անձի։

(օ. մ.) 219. 3—1

Լազարեան Ճեմարանից Արևելեան Լեզուաց

Արքեպիսկոպոս ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑԻ դրամագլխի հաշիւը 1913 թ. համար։

	%-աբեր թղթեր. ռուբ.	կոպ.	առձեռն դրամ. ռուբ.	կոպ.
ՄՈՒՏՔ				
Մնում էր 31-ն յունվ. 1913 թ.	131697	53	2330	50
1913 թ. ընթացքում մտել է	9600	»	5739	69
ԾԱԽՔ.				
%-աբեր թղթեր գնելու իրանց ընթացիք կտրօններով	2322	22	7938	82
31-ն յունվ. 1914 թ. առ ձեռն պատրաստ կայ	138975	31	131	37

Ծանօթութիւն.—Դրամագլուխը գտնվում է Մոսկվայի գանձարանում և պէտք է շահեցվի 1883 թ. սկսած 125 տարվան ընթացքում մինչև 12 միլիօն ռուբլու հասնելը, այնուհետև պիտի յանձնվի գոհաբերողի անունով ուսումնարանների և Թոշակների։

ՆՐԱՆՑ, ՈՐՈՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՅԱՐՄԱՐ ԵՒ ԷԺԱՆ ԳՆԱԼ
ԱՄԵՐԻԿԱ,
խորհուրդ ենք տալիս գնալ ՀԱՄԲՈՒՐԳ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳԾԻ շոգենաւերով։ Իւրաքանչիւր անձն, ով դիմում է մեզ, ձրիաբար ստանում է մանրամասն տեղեկութիւններ գլխաւոր գործակալութիւնից՝ С. Вольффъ мл. ГАМБУРГЪ, Германія. S. Wolff jr. HAMBURG. Glockengiesserwall 13.
(Հ. Զ.) P. S. Խնդրում ենք գրել մեզ ռուսերէն։ 106. 25—10

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный